


Խաչի
շբրան

KYURKHYAN

Մարզանց
the prophet

1915.info



Խալիլ Չիբրան
Մարզարեն

Խալիւ Չիբրան Մարգարեն

թարգմանությունը
անգլերենից
Սոնա Քյուրքչյանի

pyurkchyan.info 5 1915.info
Եղիշ Վահագին

K Y U R K C H Y A N
Քյուրքչյան, Երևան, 2016

ՀՏԴ 821.111(73)-3:1/14
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-4+87
Զ 567

Խալիլ Ջիբրան «Մարգարեն»
Եր.: «Քյուրքչյան» ՍՊԸ, 2016

թարգմանությունը անգլերենից Սոնա Քյուրքչյանի

Խմբագիր՝ Նումե Թովմասյան
սրբագրիչ՝ Եսթեր Խանիկյան
դիզայնը՝ Արմեն Քյուրքչյանի
գեղ. Խմբագիր՝ Աստղիկ Քյուրքչյան
տեխ. Խմբագիր՝ Արա Լանջունի
էջադրումը՝ Թագուհի Աշիկյանի

© Սոնա Քյուրքչյան
© «Քյուրքչյան» ՍՊԸ, 2016 | Kyurkchyan

ISBN 978-9939-9122-6-4
www.kyurkchyan.org

Բովանդակություն

Նավի գալուստը	7
Սիրո մասին	15
Ամուսնության մասին	19
Երեխաների մասին	21
Տալու մասին	23
Ուտելու և Խմելու մասին	27
Աշխատանքի մասին	29
Ուրախության և Տիրության մասին	34
Տների մասին	37
Հազուստի մասին	41
Առուծախի մասին	43
Ոճրի և Պատժի մասին	46
Օրենքների մասին	52

Ազատության մասին	56
Բանականության և Կրքի մասին	60
Ցավի մասին	63
Ինքնաճանաչողության մասին	65
Ուսուցանելու մասին	67
Ընկերության մասին	69
Խոսելու մասին	72
Ժամանակի մասին	74
Բարու և Չարի մասին	76
Աղոթքի մասին	79
Հաճույքի մասին	82
Գեղեցիկի մասին	86
Կրոնի մասին	90
Մահվան մասին	93
Հրաժեշտ	96

Նավի գալուստը

Ալմուստաֆան՝ ընտրյալն ու սիրելին, որն ինքն իր օրվա լուսաբացն էր, Օրֆալեզ քաղաքում տասներկու տարի սպասել էր իր նավին, որ վերադառնալու էր և տանելու էր իրեն այն կղզին, որտեղ նա ծնվել էր:

Տասներկուերրոդ տարվա Իելոլի՝ հունձքի ամսվա յոթերորդ օրը նա բարձրացավ բլուր՝ քաղաքի պարիսպներից այն կողմ, և նայեց դեպի ծոփս ու տեսավ մշուշի մեջ երևացող նավը:

Եվ նրա սրտի դարպասները լայն բացվեցին, ու նրա ուրախությունը տարածվեց ծովից անդին: Նա փակեց աչքերն ու աղոթեց իր հոգու լոռության մեջ:

Բայց երբ նա իջնում էր բլուրն ի վար, տիսրություն պատեց նրան, և նա իր սրտում մտածեց.

- Ինչպէ՞ս զնամ այստեղից խաղաղությամբ և անտրտում: Ո՞չ, անվերք հոգով չեմ հեռանում ես այս քաղաքից:

Երկար էին ցավի օրերն ու միայնության գիշերները, որ անց եմ կացրել այս քաղաքի պատերի մեջ, և ո՞վ կարող է բաժանվել իր ցավից ու միայնությունից առանց ափսոսանքի:

Հոգուս անհամար մասնիկներ եմ շադ տվել այս փողոցներում, և շատ են իմ իղձերի մանուկները՝ այս բլուրներով մերկ վազող, և ես չեմ կարող հեռանալ նրանցից առանց ցավի ու ծանրության զգացումի:

Հագուստ չեմ, որ վրայիցս նետում եմ ես այսօր, այլ մաշկ, որ պոկում եմ իմ սեփական ձեռքերով:

Նետում թողածս էլ ոչ թե միտք է, այլ քաղցից ու ծարավից քաղցրացած սիրտ:

Այո՛, ես այլես չեմ կարող հապաղել:

Ծովը, որ ամեն ինչ դեպի իրեն է ձգում, կանչում է ինձ, և ես պետք է նավ բարձրանամ,

Քանզի մսալ, չնայած որ ժամերն այրվում են գիշերում, նշանակում է սառել, բյուրեղանալ ու ձուլածո դառնալ:

Սիրով կտանեի ինձ հետ այն ամենը, ինչ կա
այստեղ, բայց ինչպէ՞ս:

Զայնն իր հետ չի կարող տանել իրեն թևեր
տվող լեզուն ու շուրթերը: Նա մենակ պետք է
սլանա: Եվ մենակ ու առանց իր բույնի պետք է
արծիվը թռչի դեպի արևը:

Երբ նա բլրի ստորոտին հասավ, կրկին շըր-
ջվեց դեպի ծոփս ու տեսավ, թե ինչպէս էր իր
նավը մոտենում նավահանգստին, ու տեսավ
նավաստիներին՝ իր հայրենակիցներին, նավի
առաջնամասում:

Եվ նրա հոգին աղաղակեց, ու նա ասաց
նրանց.

- Որդինե՞ր իմ նախամոր, հեծյալնե՞ր ալիք-
ների,

Որքա՞ն հաճախ եք դուք նավարկել իմ երազ-
ներում: Եվ այժմ դուք գալիս եք իմ զարթոնքի
ժամանակ, որն իմ ամենախոր երազն է:

Պատրաստ եմ ես գնալու, և փափազս՝ առա-
գաստները պատրաստ, սպասում է քամուն:

Միայն մի անգամ էլ լիաթոք շնչեմ այս հան-
դարտ օդը, միայն մի սիրող հայացք էլ նետեմ,

Հետո ես կկանգնեմ ձեր կողքին՝ ծովագնացը

ծովագնացների կողքին:

Եվ դու, անսահման ծով, անքուն մայր, գետակի ու վտակի միակ խաղաղություն և ազատություն,

Թու վյլ տուր՝ գետակի մի քչքոց, բացատի մի շշունչ էլ վայելեմ,

Ու կզամ քեզ մոտ՝ անսահման կաթիլն անսահման ծովի մոտ:

Եվ երբ նա քայլում էր, հեռվում տեսավ տրղամարդկանց ու կանանց, որ թողնում էին իրենց դաշտերն ու խաղողի այգիներն ու շտապում էին դեպի քաղաքի դարպասները:

Նա լսեց նրանց ձայները, որ իր անունն էին կանչում, և դաշտից դաշտ մեկը մյուսին իմաց էին տալիս նավի գալստյան մասին:

Եվ նա ասաց ինքն իրեն.

- Կարո՞ղ է արդյոք պատահել այնպես, որ բաժանման օրը միանալու օր լինի:

Եվ գուցե իմ մայրամուտը լուսաբաց էր իրականում:

Ի՞նչ եմ տալու ես նրան, ով թողել է իր գութանն ակոսի մեջ, կամ նրան, ով կանգնեցրել է անիփս իր հնձանի:

Կղառնա՞ արդյոք իմ սիրտը բերքառաւ մի ծառ, որպեսզի պտուղները հավաքեմ և նրանց տամ:

Եվ կիոսե՞ն արդյոք իղձերն իմ աղբյուրի պես, որ կարողանամ նրանց բաժակները լցնել:

Արդյո՞ք տավիդ եմ ես, որ ձեռքն ամենակարողի ինձ դիպչի, կամ սրինգ, որ նրա շունչն իմ միջով անցնի:

Եթե լոռություններ փնտրող եմ ես, ի՞նչ գանձ եմ գտել լոռությունների մեջ, որ վստահությամբ բաժանեմ:

Եթե այսօր իմ բերքահավաքի օրն է, ուրեմն ի՞նչ դաշտերում և տարվա ո՞ր մոռացված եղանակին եմ ցանել սերմը:

Եթե հիմա է իսկապես ժամը, որ պետք է ջահըս բարձրացնեմ, իմ կրակը չէ, որ ջահիս մեջ կվառվի:

Դատարկ և անկրակ կբարձրացնեմ այն,

Եվ զիշերվա պահապանը յուղ կլցնի ջահիս մեջ և նաև կվառի այն:

Այսքանը նա ասաց բառերով, սակայն նրա սրտում շատ բան չասված մնաց, քանզի նա չէր կարող ինքը խոսել իր մեծ գաղտնիքի մասին:

Երբ նա քաղաք մտավ, բոլոր մարդիկ եկան նրան դիմավորելու, և բոլորը միաձայն նրան էին կանչում:

Քաղաքի տարեցներն առաջ եկան ու ասացին.

- Դեռ մի՛ հեռացիր մեզանից:

Մեր մայրամուտի միջօրեն ես եղել, և քո երիտասարդությունը մեզ երազանքներ է տվել՝ երազելու:

Դու օտարական չես մեզ համար, ոչ էլ հյուր, դու մեր որդին և սիրելին ես:

Թույլ մի՛ տուր՝ մեր աշքերն արդեն կարուտեն քեզ:

Իսկ քրմերն ու քրմուհիներն ասացին նրան.

- Թող ծովի ալիքները դեռ չբաժանեն մեզ, և թող հուշ չդառնան տարիները, որ մեզ հետ ես անցկացրել:

Դու շրջեցիր մեր մեջ՝ որպես ոգի, և քո ստվերը լույս էր մեր դեմքերին:

Մենք շատ ենք քեզ սիրել: Բայց լուռ և քողարկված է եղել մեր սերը:

Իսկ այժմ այն բղավում է քո մասին և կանգնած է քո առջև:

Եվ միշտ էլ այդպես է եղել, որ մինչև բաժանման պահը սերը չի իմացել սեփական խորությունը:

Մյուսներն իլ եկան և աղաչեցին նրան: Սակայն նա չպատասխանեց, միայն խոնարհեց զլուխը, և նրանք, որ մոտ էին կանգնած, տեսան նրա՝ կրծքի վրայով հոսող արցունքները:

Եվ նա մարդկանց հետ միասին քայլեց դեպի տաճարի առջև գտնվող մեծ հրապարակը:

Սրբավայրից դուրս եկավ մի կին, ում անունն Ալմիտրա էր: Ալմիտրան գուշակուի էր:

Նա չափազանց քնքշությամբ նայեց այդ կնոջը, քանզի Ալմիտրան էր, որ փնտրեց, գտավ և հավատաց իրեն հենց առաջին օրը, որ նա այդ քաղաք էր եկել:

Ալմիտրան ողջունեց նրան՝ ասելով.

- Մարգարե՛ Աստծո, կատարյալի փնտրտուր-ներում երկար որոնեցիր նավիդ հանգրվանը:

Այժմ նավի եկել է, դու պետք է գնաս:

Խորն է կարոտդ դեպի քո հուշերի երկիրը և դեպի մեծ երազանքներիդ բնակության վայրը, և ո՞չ մեր սերը պետք է պարտավորեցնի քեզ, ո՞չ ել մեր կարիքները կարող են քեզ պահել:

Սակայն խնդրում ենք քեզ, որ նախքան մեզանից հեռանալը, խոսես մեզ հետ և փոխանցես մեզ քո ճշմարտությունը:

Ու մենք իլ կտաք այն մեր զավակներին, նրանք իլ՝ իրենց զավակներին, և այն չի մեռնի:

Միայնության մեջ հետևել էս մեր օրերին, ար-թուն լսել էս, թե ինչպես ենք քնի մեջ լալիս ու ծիծաղում:

Ուրեմն այժմ բացահայտի՛ր մեզ համար, թե ով ենք մենք, և պատմի՛ր մեզ այն ամենը, ինչ տեսել էս, որ զոյություն ունի ծնունդի և մահվան միջև:

Եվ նա պատասխանեց.

- Օրֆալեզի՛ ժողովուրդ, ուրիշ ինչի՞ մասին կարող եմ խոսել, եթե ոչ այն բաների, որ այս պահին կ հուզում է ձեր հոգիները:

Սիրո մասին

Այնժամ Ալմիտրան ասաց. «Խոսի՞ք մեզ հետ
Սիրո մասին»:

Նա բարձրացրեց գլուխը, նայեց մարդկանց, ու
լուրջուն տիրեց: Հետո նա հզոր ձայնով ասաց.

- Երբ սերը ձեզ կանչի, հետևե՛ք նրան,

Չնայած որ սիրո ճանապարհները դժվարին
ու խորդութորդ են:

Եվ երբ նրա թևերը զրկեն ձեզ, փարվե՛ք նրան,

Չնայած որ նրա թևերի մեջ թաքցրած թուրը
կարող է ձեզ խոցել:

Եվ երբ նա խոսի ձեզ հետ, հավատացե՛ք
նրան,

Չնայած որ նրա ձայնը կարող է փշրել ձեր
երազներն այնպես, ինչպես հյուսիսային քամին
է ավերում պարտեզը:

Քանզի ինչպես սերը ձեզ թագադրում է, այնպես էլ խաչում է:

Ինչպես այն նպաստում է ձեր աճին, այնպես էլ կոտրում է ձեր ճյուղերը,

Ինչպես բարձրանում է վեր և շոյում արևի տակ երերացող ձեր ամենանուրք ճյուղերը, այնպես էլ իջնում է հողի տակ՝ մինչև ձեր արմատները, և ցնցում դրանք:

Նա ցորենի հասկի նման իր խուրձի մեջ կը-
վերցնի ձեզ:

Նա կկալսի ձեզ, որպեսզի մերկացնի:

Կմաղի, որ ազատի ձեզ ձեր կեղևից:

Կաղա այնպես, որ սպիտակեք:

Կհունցի ձեզ, մինչև որ լրիվ փափկեք,

Հետո ձեզ իր սուրք կրակին կտա, որ սուրք
հաց դառնաք Աստծո սուրք խնջույքի համար:

Եվ այս ամենը սերը կանի ձեզ հետ, որպեսզի
դուք կարողանաք ըմբռնել գաղտնիքները ձեր
սրտերի՝ այդ իմացությամբ դառնալով Կյանքի
սրտի մի մասը:

Բայց եթե վախենաք և սիրո խաղաղությունն
ու հաճույքը միայն փնտրեք,

Լավ է ծածկեք ձեր մերկությունն ու դուրս

գաք սիրո զավիթից

Դեպի անեղանակ աշխարհը, որտեղ կծիծանէք, բայց ոչ բոլոր ձեր ծիծաղները, որտեղ լաց կլինեք, սակայն ոչ ձեր բոլոր արցունքները:

Սերը տալիս է ոչ այլ ինչ, քան ինքն իրեն և վերցնում է միայն ինքն իրենից:

Ինչպես սերը ոչինչ չի սեփականացնում, այնպես էլ նրան չես սեփականացնի,

Քանզի սերը բավարարվում է սիրով:

Երբ սիրում եք. «Աստված իմ սրտում է» ասելու փոխարեն ասե՞ք. «Ես Աստծո սրտում եմ»:

Եվ մի՛ կարծեք, որ կարող եք սիրուն ուղղություն տալ, եթե այն ձեզ արժանի է համարում, ինքն է ձեզ ուղղություն տալիս:

Սերը, բացի ինքն իրեն բավարարելուց, այլ ցանկություն չունի:

Բայց եթե սիրում եք և ցանկություններ եք ունենալու, ուրեմն թող ձեր ցանկությունները հետևյալը լինեն.

Հալվել և լինել կարկաչող առվի նման, որ զիշերում իր մեղեղին է երգում,

Իմանալ ցափս անսահման քնքշության,

Խոցվել սիրո սեփական ըմբռնումով,

Ու պատրաստակամորեն և ուրախությամբ
արնահոսել:

Արթնանալ լուսաբացին թև առած սրտով և
շնորհակալ լինել, որ նոր օր է տրված սիրելու
համար,

Հանգստանալ կեսօրին՝ խորհելով սիրո զմայ-
լանքի մասին,

Երեկոյան վերադառնալ տուն երախտազի-
տության զգացումով,

Եվ հետո քնել՝ սիրելիի համար աղոթքը սրր-
տումդ և նրա գովքի երգը շուրթերիդ:

Ամուսնության մասին

Հետո Ալմիտրան կրկին խոսեց ու ասաց. «Ուսուցի՛ չ, իսկ ի՞նչ կասես Ամուսնության մասին»:

Դուք միասին եք ծնվել և միասին կլինեք հավիտյան:

Դուք միասին պիտի լինեք, եք մահվան ձեր-մակ թևերը ցիրուցան անեն ձեր օրերը:

Դուք միասին պիտի լինեք, նույնիսկ Աստծո լուռ հիշողության մեջ:

Բայց թող ձեր միասնության մեջ տարածություններ լինեն,

Եվ թող երկնային քամիները պարեն ձեր միջև:

Սիրե՛ք միմյանց, բայց սերը մի՛ դարձրեք կապանք,

Թող այն ծփացող ծով լինի ձեր հոգիների միջև:
Լցրե՛ք մեկդ մյուսի զավաթները, բայց մի՛
խմեք նույն զավաթից:

Մեկդ մյուսին ձեր հացից տվե՛ք, բայց նույն
կտորը մի՛ կերեք:

Երգե՛ք և պարե՛ք միասին, և ուրախացե՛ք,
սակայն թող ձեզանից յուրաքանչյուրը միայնակ
լինի,

Քանզի նույնիսկ վինի լարերը միայնակ են,
չնայած ոք թրթռում են նույն երաժշտությամբ:

Տվե՛ք ձեր սրտերը միմյանց, բայց ոչ ի պահ,
Քանզի միայն Կյանքի ձեռքը կարող է պահել
ձեր սրտերը:

Եվ կանգնե՛ք միասին, բայց ոչ շատ մոտ մի-
մյանց,

Քանզի տաճարի սյուներն ել անջատ են կանգ-
նած,

Եվ կաղնին ու նոճին չեն աճում միմյանց ստր-
վերի ներքո:

Երեխաների մասին

Մի կին՝ երեխան գրկին, ասաց. «Խոսի՛ք մեզ
հետ Երեխաների մասին»:

Եվ նա այսպես ասաց.

- Ձեր երեխաները ձեր երեխաները չեն:

Նրանք որդիներն ու դուստրերն են Կյանքի
ձգտման:

Նրանք գալիս են ձեր միջով, բայց ոչ ձեզանից,

Ու թեև նրանք ձեզ հետ են, ձեզ չեն պատկա-
նում:

Դուք կարող եք նրանց տալ ձեր սերը, բայց ոչ
ձեր մտքերը,

Քանզի նրանք իրենցն ունեն:

Դուք կարող եք բնակեցնել ձեր տանը նրանց

մարտինները, բայց ոչ հոգիները,

Քանզի նրանց հոգիները վաղվա տանն են
բնակվում, ուր դուք այցելել չեք կարող նույնիսկ
ձեր երազներում:

Դուք կարող եք ձգտել նրանց նման լինել,
բայց ոչ նրանց դարձնել ձեզ նման,

Քանզի կյանքը չի գնում հետ, ոչ էլ երեկվա
օրվա մեջ է միշտ մնում:

Դուք աղեղներն եք, ձեր զավակներն էլ՝ կեն-
դանի նետերը,

Աղեղնավորը տեսնում է նշանակետն ան-
սահմանության ճանապարհի վրա, և Նա Իր ողջ
ուժով ձգում է ձեզ, որպեսզի Իր նետերը հեռու և
արագ թռչեն:

Ուրախությամբ ձկվե՞ք աղեղնավորի ձեռ-
քում,

Քանզի որքան ոք Նա սիրում է թռչող նետը,
այնքան էլ սիրում է ամուր, հաստատուն աղեղը:

Տալու մասին

Հետո մի հարուստ մարդ ասաց. «Խոսի՛ր մեզ հետ Տալու մասին»: Եվ նա պատասխանեց.

- Քիչ է ձեր տվածքը, երբ տալիս եք ձեր ունեցածից:

Իսկապես տալ, նշանակում է տալ ինքներդ ձեզանից,

Քանզի ի՞նչ են ձեր ունեցածները, եթե ոչ առարկաներ, որ պահում եք միայն այն երկյուղից, որ վաղը որանք կարող են ձեզ պետք գալ:

Իսկ վաղը՝ ի՞նչ կրերի այն չափից շատ շրջահայաց շանը, որ թաղում է ուկորներն անհետ ավազի մեջ՝ ուխտավորների հետևից սուրբ քաղաք գնալու ճանապարհին:

Եվ ի՞նչ է կարիքի վախը, եթե ոչ հենց կարիք: Իսկ ահը՝ ծարավի, երբ ձեր ջրհորը լիքն է,

արդյոք հենց ծարավը չէ՝, որ անհագ է:

Կան մարդիկ, որ շատ ունեն, սակայն քիչ են տալիս և տալիս են, որպեսզի իրենց առաքինի ճանաչեն, և այդ թաքուն ցանկությունն անպիտան է դարձնում նրանց նվերները:

Եվ կան մարդիկ, որ ունենալով քիչ, տալիս են իրենց ողջ ունեցածը:

Նրանք կյանքին և կյանքի առատաձեռնությանը հավատացողներն են, և նրանց քսակը երեք դատարկ չի լինում:

Կան մարդիկ, որ տալիս են ուրախությամբ, և ուրախությունն այդ նրանց պարզեն է:

Կան մարդիկ որ ցավով են տալիս, և այդ ցավը նրանց մկրտությունն է:

Եվ կան այնպիսիք, որ տալուց ո՞չ ցավ են զգում, ո՞չ տալու մեջ ուրախություն են փընտրում, ո՞չ էլ առաքինություն գործելու մտքով են տալիս,

Նրանք տալիս են այնպես, ինչպես անդին հովիտներում մրտենին իր բույրն է օդի մեջ տարածում,

Չնայած որ նրանց ձեռքով Աստված է գործում, և նրանց աչքերի խորքից Նա ժպտում է աշխարհին:

Լավ է տալ, եթք խնդրում են, սակայն ավելի

լավ է տալ, երբ ոչ թե խնդրում են, այլ ինքներդ
եք հասկանում,

Եվ առատաձեռնի համար ավելի մեծ ուրա-
խություն է փնտրելը նրան, ում կարող է տալ,
քան հենց տալը:

Իսկ կա՞ արդյոք որևէ քան, որ պետք է պահել,
չտալ:

Այն ամենը, ինչ ունեք, մի օր տրվելու է,

Ուրեմն հիմա տվե՞ք, որպեսզի հետո, երբ գա
պահը, տան ձեզ և ձեր ժառանգներին:

Դուք հաճախ ասում եք. «Ես կտայի, սակայն
միայն նրան, ով արժանի է»:

Ձեր պտղատու այգու ծառերն այդպես չեն
ասում, ոչ էլ հոտերը ձեր արոտավայրի:

Նրանք տալիս են, որ կարողանան ապրել,
քանզի պահել, չտալ, նշանակում է մեռնել:

Նա, ով գիշերների ու ցերեկների է արժանա-
ցել, վստահորեն արժանի է մասցած ամեն ին-
չին, որ կարելի է ձեզանից ստանալ:

Եվ նա, ով արժանացել է խմելու կյանքի օվ-
կիանոսից, արժանի է լցնելու իր գավաթը ձեր
փոքրիկ վտակից:

Եվ ի՞նչը կարող է խիզախությունից ու վստա-
խությունից ավելի վեհ լինել, եթե ոչ վերցնելու
բարեգործությունը:

Եվ ո՞վ եք դուք, որ մարդիկ բացեն ձեզ իրենց սրտերն ու հպարտությունը, որ դուք նրանց մերկ և նվաստացած տեսնեք:

Առաջին հերթին տեսե՞ք, որ դուք ինքներդ արժանի լինեք տալու,

Քանզի իրականում կյանքն է տալիս կյանքին, մինչ դուք ձեզ տվող եք համարում, սակայն իրականում վկանեք եք լոկ:

Եվ դուք՝ վերցնողներդ, իսկ դուք բոլորդ վերցնող եք, մի՛ վերցրեք ձեզ վրա երախտագիտության բեռը, քանզի դրանով ծանր լուծ եք դնում, թե՛ ձեր, և թե՛ ձեզ տվողի ուսերին:

Ավելի լավ է՝ տվողի հետ միասին նրա պարզեների վրա, ինչպես թերի վրա, վեր բարձրանաք,

Քանզի ձեր պարտքի մասին չափից ավելի հիշել, նշանակում է կասկածել նրա մեծահոգությանը, ում մայրն առատաձեռն երկիրն է, իսկ Աստված՝ հայրը:

Ուտելու և խմելու մասին

Հետո մի ծեր մարդ, որ պանդոկապան էր, ասաց. «Խոսի՞ր մեզ հետ Ուտելու և Խմելու մասին»:

Եվ նա այսպես պատասխանեց.

- Լավ կլիներ, որ դուք կարողանայիք ապրել հողի բույրով և բույսի պես՝ լուս կլանելով:

Բայց քանի որ դուք պետք է սպանեք, որ ուտեք, և նորածնից խլեք մոր կաթը, որ ձեր ծարավը հագեցնեք, ուրեմն թող ուտելն ու խմելը պաշտամունքի գործողություններ լինեն,

Եվ թող ձեր սեղանը խորան լինի, որի վրա զոհաբերվում են անտառների և դաշտերի անարատ և անմեղ արարածները՝ հանուն մարդու միջի անարատի և անմեղի:

Գազանին սպանելիս ձեր սրտում ասե՛ք.

«Նույն ուժով, որ դու ես սպանվում, սպանվելու
եմ նաև ես, և ես նույնպես սպառվելու եմ,

Քանզի օրենքը, որ քեզ իմ ձեռքն է հանձնել,
ինձ էլ մեկ այլ՝ ավելի հզորի ձեռքն է հանձնելու:

Քո և իմ արյունները ոչ այլ ինչ են, քան եր-
կընքի ծառը սնող բուսահյութ»:

Խնձորը կծելիս ձեր սրտում ասե՞ք.

Քո սերմերը պիտի ապրեն իմ մարմսում,

Քո վաղվա կոկոնները պիտի ծաղկեն իմ սըր-
տում,

Քո բույրն իմ շունչը պիտի լինի,

Եվ միասին մենք պիտի ուրախանանք տար-
վա բոլոր եղանակներին»:

Աշնանը խաղողը հնձանի համար հավաքե-
լիս ձեր սրտում ասե՞ք. «Ես էլ խաղողի այզի եմ,
և իմ միրգն էլ հավաքվելու է հնձանի համար,

Եվ նոր գինու նման ես էլ պահվելու եմ հա-
վերժական անոթում»:

Եվ ձմռանն այդ գինին ըմպելիս թող ձեր
սրտերում ամեն զավաթի համար երգ լինի,

Եվ երգը թող բերի աշնանային օրերի, գինու
այզու և հնձանի հիշողությունը:

Աշխատանքի մասին

Հետո մի հոդագործ ասաց. «Խոսի՛ր մեզ հետ
Աշխատանքի մասին»:

Եվ նա պատասխանեց՝ ասելով.

- Դուք աշխատում եք, որպեսզի երկրի և նրա
հոգու հետ ներդաշնակ լինեք,

Քանզի պարապ լինել, նշանակում է կորց-
նել տարվա եղանակների ռիթմը և դուրս ընկնել
կյանքի երթից, որ հպարտ հնազանդությամբ
գնում է դեպի անսահմանություն:

Երբ աշխատում եք, սրինգ եք, որի սրտի մի-
ջից ժամերի շշունջը երաժշտության է վերած-
վում:

Իսկ ո՞վ է ուզում եղեգ լինել՝ համը ու լուռ, երբ
մացած բոլորը համահունչ երգում են:

Չեզ միշտ ասվել է, որ աշխատանքն անեծք է, իսկ տքնաջան աշխատանքը՝ դժբախտություն:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ աշխատելով իրականացնում եք երկրի հեռավոր երազի այն մասը, որ այդ երազի ծնվելու պահից հենց ձեզ է վերապահվել իրականացնել:

Եվ եթե անմասցորդ տրվում եք աշխատանքին, ուրեմն իրապես սիրում եք կյանքը,

Եվ սիրել կյանքն աշխատանքի միջոցով նշանակում է մտերմիկ լինել կյանքի ամենանվիրական գաղտնիքի հետ:

Սակայն եթե տառապանքի պահին դուք ձեր ծնունդը դժբախտություն անվանեք, իսկ մարմսի մասին հոգածությունը՝ ճակատին գրված անեծք, ես ասում եմ ձեզ, որ յոթ տակ քրտինք պիտի թափեք, որպեսզի մաքրվի այն, ինչ գրված է:

Չեզ նաև ասվել է, որ կյանքը խավար է, և այն պահերին, երբ ամեն ինչից հոգնած ու ձանձրացած եք լինում, կրկնում եք այն, ինչ ասել են հոգնած ու ձանձրացած մարդիկ:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ կյանքն իրոք խավար է, երբ չկա ձգոտում,

Սակայն առանց գիտելիքի կույր են բոլոր

ձգտումները,

Եվ բոլոր գիտելիքներն ապարդյուն են առանց
աշխատանքի,

Եվ ցանկացած գործ ունայն է առանց սիրո:

Եվ երբ սիրով եք աշխատում, դուք ներդաշ-
նակության եք հասնում ինքներդ ձեզ հետ, Աս-
տըծոն և միմյանց հետ:

Իսկ ի՞նչ է նշանակում՝ աշխատել սիրով:

Նշանակում է կտավը գործել սրտիդ նուրբ
թելերով, ասես սիրելիդ է կրելու այն:

Նշանակում է տունը կառուցել այնպիսի ոգե-
շընչմամբ, ասես սիրելիդ է ապրելու այդտեղ:

Նշանակում է սերմս այնպիսի քնքշությամբ
դնել հողի մեջ և այնպիսի քնքշությամբ բերքը հա-
վաքել, ասես սիրելիդ է վայելելու այդ պտուղնե-
րը:

Նշանակում է ձեր սեփական ոգու շնչով լից-
քավորել այն ամենը, ինչ անում եք,

Եվ գիտակցությամբ, որ բոլոր օրինյալ հոգի-
ները երկնքից հետևում են ձեզ:

Հաճախ լսել եմ, որ, կարծես քնի մեջ խոսելով,
ասում եք. «Նա, ով աշխատում է մարմարի հետ
և իր սեփական հոգու մարմսավորումն այդ քա-

րի մեջ է գտնում, ավելի վեհ է, քան նա, ով հոդ է մշակում:

Եվ նա, ով որսում է ծիածանը, որ փակցնի կտավին, ավելի արժանավոր է, քան նա, ով սանդալներ է կարում մեր ոտքերի համար»:

Բայց ես ասում եմ ոչ թե քնիս մեջ, այլ այնպես սթափ, ինչպես միայն կեսօրին են լինում, որ քամին հսկա կաղնու հետ ավելի քնքշորեն չի խոսում, քան մյուս բոլոր խոտերի հետ:

Եվ միայն նա է մեծ, ով քամու ձայնը վերածում է երգի՝ իր սիրով այդ երգն ավելի քաղցրացնելով:

Աշխատանքը սիրո մարմսավորումն է:

Եվ եթե չեք կարող սիրով աշխատել, այլ միայն՝ տհաճությամբ, լավ է թողնեք ձեր աշխատանքը և նստեք տաճարի դարպասի մոտ ու ողորմություն խնդրեք նրանցից, ում համար աշխատանքն ուրախություն է,

Քանզի եթե հացն անտարբերությամբ եք թըխում, ձեր թխած հացը դառն է լինում և կես մարդու էլ չի կշտացնում:

Եվ եթե խաղողը դժկամությամբ եք տրորում, թունավորում եք ապագա գինին:

Եվ եթե նույնիսկ հրեշտակի ձայն ունեք, սակայն չեք սիրում երգել, ձեր երգով միայն խլաց-

Ուրախության և Տիրության մասին

Հետո մի կին ասաց. «Խոսի՞ր մեզ հետ Ուրախության և Տիրության մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Ձեր ուրախությունը ձեր դիմակագերծ տղիւրությունն է:

Եվ նույն ջրհորը, որից ձեր ծիծաղն է բխում, հաճախ լցված է լինում ձեր արցունքներով:

Եվ ուրիշ էլ ինչպե՞ս կարող է լինել:

Որքան խորն է տիրությունը միսրածում ձեր սրտի մեջ, այնքան ավելի շատ ուրախություն կարող եք տեղափորել այնտեղ:

Արդյոք գինով լցված ձեր գավաթը նույն զավաթը չ'է, որ բրուտի վառարանում է թրծվել:

Եվ սի՞թե ձեր հոգիները հանգստացնող վին նույն փայտը չեն, որ փորված է դանակներով:

Երբ ուրախ եք, նայե՛ք ձեր սրտի խորքը և կտեսնեք, որ միայն այն է ձեզ ուրախացնում, ինչը նախկինում տիրեցրել է:

Երբ տիսուր եք, կրկին նայե՛ք ձեր սրտի մեջ և կտեսնեք, որ իրականում լալիս եք այն քանի համար, ինչը ձեր բերկրանքն է եղել:

Չեզանից ոմանք ասում են. «Ուրախությունն ավելի զորեղ է, քան տիրությունը», իսկ մյուս-ներն ասում են. «Ո՛չ, տիրությունն է ամենազորեղը»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ նրանք անբաժանելի են:

Միասին են նրանք զալիս, և երբ նրանցից մի-այն մեկը ձեզ հետ սեղանի շուրջ նստած է լի-նում, իիշե՛ք, որ մյուսը քնած է ձեր անկողնում:

Հիրավի, դուք կշեռքի նման կախված եք ձեր տիրության և ուրախության միջև:

Միայն, երբ հոգեպես պարպված եք, այդ ժամանակ եք անշարժ և հավասարակշռված:

Իսկ երբ զանձերի պահապանը որոշի կշռել իր ուկին և արծաթը, ձեր ո՞ր նժարը կլինի առավել ծանր՝ ուրախությա՞ն, թէ՞ տիսրության:

Տների մասին

Հետո առաջ եկավ մի որմասդիր ու ասաց.

«Խոսի՞ր մեզ հետ Տների մասին»:

Եվ նա այպես պատասխանեց.

- Ձեր պատկերացումներից կացարան կառուցե՞ք անապատում, ինչպես որ տուն եք կառուցում քաղաքի պարիսպներից ներս,

Քանզի ինչպես որ դուք եք ուզում մթնշաղին վերադառնալ տուն, նույնն էլ ցանկանում է ձեր միջի հեռավոր և միայնակ թափառականը:

Ձեր տունը ձեր ավելի մեծ մարմինն է:

Այն ապրում է արևի տակ և քնում գիշերվալության մեջ: Կարծում եք՝ ձեր տունը երազ չի տեսնում: Եվ երազում չի թողնում քաղաքը, որպեսզի ուղևորվի դեպի հովիտներն ու սարերը:

Երանի՝ կարողանայի ափիս մեջ հավաքել ձեր տները և շաղ տալ անտառներում ու մարգագետիններում:

Երանի՝ հովիտները ձեր փողոցները լինեին, և կանաչ դաշտերը՝ ձեր արահետները, որ փնտրեիք իրար զինու այգիներում, և վերադառնայիք՝ հողի հոտը ձեր հագուստին:

Սակայն դեռևս այդպես չի լինելու:

Վախենալով՝ ձեր նախնիները ձեզ չափից դուրս իրար մոտ են համախմբել: Եվ այդ վախը դեռ մի քիչ էլ կտևի: Դեռ մի որոշ ժամանակ էլ ձեր քաղաքի պարիսապները կբաժանեն ձեր օշախները ձեր դաշտերից:

Ասացե՛ք ինձ, Օրֆալեզի՝ ժողովուրդ, ի՞նչ ունեք ձեր տներում: Ի՞նչ եք այդպես պահում փակ դռների հետևում:

Խաղաղությո՞ւնն արդյոք՝ ձեր ուժը բացահայտող հանդարտ հոգեվիճակը,

Թե՞ հիշողությունները՝ մտքի խորքերում փայլատակող կամարները:

Գուցե գեղեցի՞կը, որ փայտից և քարից կերտած իրերից դեպի սրբազն սար է առաջնորդում սրտին:

Ասացե՛ք ինձ՝ արդյոք ունե՞ք դուք այդ ամենը ձեր տներում:

Թե՞ միայն հարմարավետություն և հարմարավետության տենչանք ունեք՝ մի բան, որ որպես հյուր է տուն մտնում, հետո տերուտիրական է դառնում:

Այն հնազանդեցնում է ձեզ և վերածում է մարիոնետների:

Եվ, չնայած որ ձեռքերը մետաքսից են, սիրտը երկաթից է:

Այն օրորում է ձեզ, որ քնեք, որպեսզի կանգնի ձեր մահճի մոտ և ծաղրի ձեր արժանապատվությունը:

Ծաղրելով ձեր առողջ զգացումները՝ նա դըրանք փաթաթում է՝ ինչպես ոյուրաքեկ անորներ:

Իսկապես, որ հարմարավետության տենչանքը սպանում է հոգին և հետո քմծիծաղով քայլում հուղարկավորության ժամանակ:

Բայց դուք, տարածության զավակներ, դուք, դադարի մեջ անդադրում էակներ, ձեզ ո՛չ կարող են թակարդել, ո՛չ էլ սանձահարել:

Ձեր տունը պետք է ոչ թե խարիսխ, այլ կայմլինի:

Այն ոչ թե վերքը ծածկող պսպղուն նրբա-

մաշկ, այլ աչքը պահպանող կոպ պետք է լինի:

Հարկ չէ, որ պահեք ձեր թևերը, որպեսզի կարողանաք անցնել դռների միջով, ո՛չ էլ կախեք ձեր գլուխները, որպեսզի չխփվեն առաստաղին, և ո՛չ էլ վախենաք շնչել, որպեսզի պատերը չճաքեն և փուլ չգան:

Հարկ չէ, որ ապրեք կենդանի մարդկանց համար մեռածների կառուցած շիրիմներում:

Եվ, չնայած շքեղությանն ու հոյակապությանը, ձեր տունը չի պահի ձեր գաղտնիքը, ոչ էլ կպատսպարի ձեր բաղձանքը,

Քանզի այն, ինչ ձեր մեջ անսահման է, ապրում է երկնքի տանը, որի դուռն արշալույսի մառախուղն է, իսկ պատուհանները՝ գիշերվաերգերն ու լոռությունները:

Հագուստի մասին

Եվ ջուլիակն ասաց. «Խոսի՞ր մեզ հետ Հագուստի մասին»:

Ու նա պատասխանեց.

- Ձեր հագուստը քողարկում է ձեր գեղեցկության մեծ մասը, սակայն չի թաքցնում այն, ինչ տգեղ է:

Եվ, չնայած հագուստի մեջ դուք անձնական ազատություն եք փնտրում, այն կարող է շղթա և լծասարք դառնալ ձեզ համար:

Լավ կլիներ՝ արևի լույսն ավելի շատ ձեր մաշկին դիպչեր, քան հագուստին,

Քանզի կյանքի շունչն արևի լույսի մեջ է, իսկ կյանքի ձեռքը՝ քամու:

Չեզանից ոմանք ասում են. «Հյուսիսային քամին է գործել հազուստները, որ մենք կրում ենք»:

Եվ ես ասում եմ. «Այո՛, հյուսիսային քամին է գործել,

Սակայն ամոթն էր նրա շյուղը, և թուլացած մկանները՝ նրա թելը:

Եվ երբ նա ավարտել էր իր գործը, քրքջում էր անտառում»:

Մի՛ մոռացեք, որ ամոթիսածությունը վահան է, որ պաշտպանում է անմաքուրի աշքից:

Եվ երբ անմաքուրն այլս չլինի, ամոթիսածությունը կլինի ոչ այլ ինչ, քան կապանք և մտքի մոլորություն:

Եվ հիշե՛ք, որ հողը հաճույք է ապրում՝ զգալով ձեր մերկ ոտքերը, իսկ քամին փափագում է խաղալ ձեր մազերի հետ:

Առուծախի մասին

Մի առևտրական ասաց. «Խոսի՛ք մեզ հետ
Առուծախի մասին»:

Եվ նա այսպես պատասխանեց.

- Հողը տալիս է ձեզ իր բերքը, և դուք երբեք
չեք լինի կարիքի մեջ, եթե իմանաք՝ ինչպես
վերցնեք հողի պարզեները:

Հողի պարզեները փոխանակելով եք գտնելու
առատություն,

Սակայն, եթե փոխանակումը սիրով և ար-
դար չլինի, ումանց ազահության, իսկ մյուսներին
սովոր կհասցնի:

Դուք, ծովի, դաշտերի ու խաղողի այգիների՝
աշխատավորներդ, երբ շուկայում հանդիպեք

շուլիակներին, կավագործներին ու համեմունք հավաքողներին,

Ոգեկոչե՛ք հողի ոգուն, որպեսզի զա ու կանգնի ձեր միջև և սրբագործի նժարներն ու բարիքների արժեքները:

Դատարկաձեռն մարդկանց, որ կզան և կցանկանան իրենց խոսքերը փոխանակել ձեր աշխատանքի հետ, թույլ մի՛ տվեք մասնակցել ձեր գործարքներին,

Այդպիսի մարդկանց ասե՛ք. «Եթե մեզ հետ դաշտ գաք, կամ մեր եղբայրների հետ ծով գնաք ու զցեք ձեր ուռկանք,

Երկիրն ու ծովը ձեր նկատմամբ էլ կլինեն այնպես առատաձեռն, ինչպես որ մեր նկատմամբ են»:

Եվ եթե շուկա զան երգիշները, պարողներն ու սրնզահարները, նրանց շնորհներից էլ զնե՛ք,

Քանզի նրանք նույնպես պտուղ և կնդրուկ հավաքողներ են, և նրանց բերածները՝ չնայած երազանքներից կերտված, հազուստ և սնունդ են ձեր հոգու համար:

Եվ նախքան շուկան լքելը, տեսե՞ք, որ ոչ ոք
դատարկ ձեռքով չգնա:

Քանզի հողի ոգին խաղաղ չի ննջի քամու
ներքո, մինչև որ ձեր բոլորի կարիքները բավա-
րարված չլինեն:

ՈՃրի և Պատժի մասին

Հետո առաջ եկավ քաղաքի դատավորներից մեկն ու ասաց. «Խոսի՞ր մեզ հետ ՈՃրի և Պատժի մասին»:

Եվ նա պատասխանեց՝ ասելով.

- Երբ ձեր հոգին քամու հետ թափառում է, այդ ժամանակ է, որ դուք՝ միայնակ ու անպաշտան, սխալ եք գործում ուրիշների, հետևաբար, ինքներդ ձեր հանդեպ:

Եվ այդ գործած սխալի համար է, որ երբ թակեք Օրինյալի դարպասները, ստիպված կլինեք անուշադրության մատնված որոշ ժամանակ սպասել:

Օվկիանոսի նման է ձեր աստվածային էռությունը.

Այն երբեք չի պղտորվում:

Եվ առանց թևերի ճախրող եթերի նման է,

Նույնիսկ արևի նման է ձեր աստվածային էռությունը,

Որ չգիտի խլուրդի մութ փոսերը, ոչ էլ փընտրում է օձի բները:

Սակայն ձեր աստվածային էռությունը միայնակ չի բնակվում ձեր մեջ:

Ձեր էռության մեծ մասը մարդն է, բայց մի մեծ մաս էլ նույնիսկ մարդ չէ,

Այլ մի տձև զածած է, որ քնած քայլում է մշուշում՝ սպասելով իր զարթնումին:

Բայց հիմա ձեր միջի մարդու մասին եմ խոսելու,

Քանզի հենց նա է, և ո՞չ ձեր աստվածային էռությունը, ո՞չ էլ տձև զածածը, որ ճանաչում է ոճիրը և պատիժն այդ ոճի:

Հաճախ եմ լսել, որ սիսալ գործած մարդու մասին այնպես եք խոսում, ասես նա ոչ թե ձեզանից մեկն է, այլ օտարական և անկոչ հյուր է ձեր աշխարհում:

Բայց ես ասում եմ, որ ինչպես, որ սուրբն ու արդարամիտը չեն կարող վեր բարձրանալ

Բարձրագույնից, որ յուրաքանչյուրիդ մեջ է,

Այդպես էլ շարն ու վատը չեն կարող ստորանալ ստորագույնից, որ նույնպես ամեն մեկիդ մեջ է:

Եվ ինչպես որ ծառի վրա ոչ մի տերև չի դեղնում առանց ծառի լուր համաձայնության,

Այդպես էլ սխալ գործողը չի կարող սխալ գործել առանց ձեր բոլորի թաքուն կամքի:

Դուք միասին՝ ինչպես մի երթ, քայլում եք դեպի ձեր աստվածային հությունը:

Դուք և՛ ճանապարհն եք, և՛ ուղևորները:

Եվ երբ ձեզանից մեկն ընկնում է, նա ընկնում է հետևից եկողների համար, որպեսզի նրանց զգուշացնի գայթակղության քարի մասին:

Եվ նա ընկնում է նաև առջևից գնացողների համար, որ լինելով ավելի արագ և հաստատաքայլ, չհեռացրին այդ քարը:

Սա նույնպես կասեմ, չնայած, որ բառերը ծանր կնստեն ձեր սրտերին.

Սպանվածն անմեղսունակ չէ իր սեփական սպանության մեջ,

Եվ նրան, ում թալանել են, ինքն էլ մեղավոր է, որ կողոպտվել է:

Արդարներն անմեղ չեն, եթե չարագործները

հանցանքներ են գործում:

Այո՛, մեղավորը հաճախ տուժածի զոհն է:

Եվ շատ հաճախ էլ մեղադրյալն է կրում ան-
մեղսունակների և անմեղների պատժի բեռը:

Դուք չեք կարող բաժանել արդարն անարդա-
րից, բարին չարից,

Քանզի նրանք միասին են կանգնած արևի
ներքո, ինչպես որ միասին են հյուսված սպի-
տակն ու սեը:

Եվ երբ սև թելը կտրվում է, ջուլիակը պետք է
ստուգի ողջ գործվածքը և, իհարկե, նաև ձախա-
րակը:

Եթե ձեզանից որևէ մեկը դատապարտի ան-
հավատարիմ կնոջը,

Թող կշեռքին դնի նաև նրա ամուսնու սիրտն
ու թող չափի հոգին:

Եվ նա, ով կխարազանի վիրավորողին, թող
նայի նաև վիրավորվածի հոգու մեջ:

Եվ եթե ձեզանից որևէ մեկը կցանկանա պատ-
ժել արդարության անունից և մոտեցնել կացինը
չարիքի ծառին, թող լավ նայի արմատներին,

Ու հաստատ կցունի բարու և չարի, պտղաբե-
րի և անպտղաբերի արմատները՝ միահյուսված
հողի լուս սրտում:

Եվ դուք, դատավորնե՛րդ, որ պետք է արդար
լինեք,

Ի՞նչ պատիծ եք սահմանելու նրա համար, ով
թեև արտաքուստ արդար է, սակայն գող է հո-
գում:

Եվ ի՞նչ պատիծ եք տալու նրան, ով սպանում
է մարմինն ուրիշի, սակայն իր էլ հոգին է մեռած:

Եվ ինչպէ՞ս պիտի մեղադրեք նրան, ով ա-
րարքներով իր խաբեքա և կեղեքիչ է,

Սակայն նա ինքը վշտացած և ընդվզած է:

Եվ ինչպէ՞ս եք պատժելու նրանց, ում զղումն
ավելի մեծ է, քան հանցանքը:

Արդյոք արդարադատությունը, որ կառավար-
վում է այն նույն օրենքով, որին դուք այդպես
պատրաստակամորեն ծառայում եք, զղալ ստի-
պելու համա՞ր չեք:

Սակայն, միևնույն է, չեք կարող անմեղին
ստիպել զղալ, կամ էլ մեղավորին արգելել, որ
զղա:

Զղումը կզա զիշերը՝ անկոչ հյուրի պես, որ
մարդիկ արթնանան և նայեն իրենք իրենց:

Եվ դուք, որ գիտակ եք արդարադատության,
ինչպէ՞ս կարող եք դատել, մինչև որ պայծառ
լույսի ներքո չտեսնեք բոլոր արարքները:

Միայն այդ ժամանակ կիմանաք դուք, որ
կանգնածն ու ընկածը նույն մարդն է՝ կանգնած
իր զաճաճ էության զիշերվա և իր աստվածային

Էռոթյան ցերեկվա միջև:

Եվ որ տաճարի անկյունաքարն ավելի կարե-
վոր չէ, քան տաճարի հիմսաքարը:

Օրենքների մասին

Հետո մի օրենսգետ ասաց. «Իսկ ի՞նչ կասես
մեր Օրենքների մասին, ուսուցի՛ չ»:

Եվ նա պատասխանեց.

- Ձեզ հաճույք է պատճառում օրենքներ հաս-
տատելը,

Սակայն ձեզ համար առավել հաճելի է դր-
բանք խախտելը՝

Օվկիանոսի մոտ խաղացող երեխաների
նման, որ դժվարությամբ աշտարակներ են շի-
նում ավագից և հետո ծիծաղելով քանդում են
դրանք:

Բայց մինչ դուք շինում եք ավագե ձեր աշտա-
րակները, օվկիանոսը նոր ավագ է բերում ափ,

Եվ երբ դուք քանդում եք ձեր շինած աշտարակ-
ները, օվկիանոսը ծիծաղում է ձեզ հետ միասին:

Օվկիանոսը միշտ էլ ծիծադում է անսեղների հետ:

Իսկ ի՞նչ կարող եմ ասել նրանց մասին, ում համար կյանքն օվկիանոս, իսկ մարդու հորինած օրենքներն ավագե աշտարակներ չեն,

Ում համար կյանքն ապար է, իսկ օրենքը՝ հատիչ, որով ապարի վրա իրենց ուզածն են փորագրում:

Ի՞նչ կարող եմ ասել հաշմանդամի մասին, որ ատում է պարողներին,

Եվ կամ լուծը սիրող ցլի մասին, որի համար հյուսիսային եղջերուն և անտառի եղնիկը մոլորված և թափառաշրջիկ արարածներ են,

Կամ էլ՝ ծեր օձի, որ, չկարողանալով իր կաշին նետել, մասցած բոլորին մերկ և անամոթ է անվանում,

Եվ նրա մասին, ով վաղ է զալիս հարսանեկան խնջույքի, ու չափից շատ ուտելուց ու հոգնելուց հետո հեռանում է՝ բոլոր խնջույքները հանցանք և բոլոր խնջույք անողներին օրինացանցներ անվանելով:

Ի՞նչ կարող եմ ասել ես նրանց մասին, եթե ոչ
այն, որ նրանք եւ կանգնած են արևի լույսի ներ-
քո, սակայն՝ մեջքով դեպի արևը:

Նրանք միայն իրենց ստվերն են տեսնում, և
իրենց ստվերներն իրենց օրենքներն են:

Եվ ի՞նչ է նրանց համար արևը, եթե ոչ ստվեր
նետողը:

Իսկ ի՞նչ է, ըստ նրանց, օրենքներին հետևելը,
եթե ոչ խոնարհվելն ու գետնի վրա իրենց ստր-
վերներին հետևելը:

Բայց դուք, որ դեմքով դեպի արևն եք քայլում,
գետնին նկարված ի՞նչ պատկերներ կարող են
ձեզ գրավել:

Ձեզ, քամու հետ ճամփորդողներիդ, ի՞նչ հող-
մացույց կարող է ուղղություն տալ:

Մարդկանց ի՞նչ օրենք կարող է կապել ձեզ,
եթե դուք քանդում եք ձեր կապանքները և նույ-
նիսկ ոչ մարդկանց կողմից կառուցված բան-
տախցերի դռները:

Ի՞նչ օրենքներից կարող եք վախենալ, եթե
դուք պարում եք և սայթաքում երկաթյա շղթա-
ներից, որ մարդու ձեռքով չեն պատրաստված:

Եվ ո՞վ կարող է ձեզ դատել, եթե դուք նետում
եք ձեր հագուստը, բայց թողնում եք ճանապար-
հի վրա, որով մարդ չի անցել:

Օրֆալեզի՝ ժողովուրդ, դուք կարող եք խլացնել թմբուկը և թուլացնել քնարի լարերը, սակայն կարո՞ղ եք արդյոք հրամայել արտույտին, որ չերգի:

Ազատության մասին

Մի հռետոր ասաց. «Խոսի՛ր մեզ հետ Ազատության մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Քաղաքի դարպասների մոտ և ձեր օջախների շուրջ ես տեսել եմ, թե ինչպես եք դուք երկրպագում և մեծարում սեփական ազատությունը,

Ինչպես որ ստրուկներն են խոնարհվում բրոնակալի առջև և գովերգում նրան, չնայած, որ նա իրենց ստրկացնում է:

Տաճարի պուրակում և միջնաբերդի ստվերում ես տեսել եմ, թե ինչպես ձեզանից ամենաազատներն իրենց սեփական ազատությունը լծի պես են կրում:

Եվ իմ սրտից արյուն է կաթել, քանզի դուք կարող եք ազատ լինել միայն այն ժամանակ, երբ

ազատություն փնտրելու նույնիսկ միտքը ձեզ համար լծասարք լինի, և եթե դադարեք ազատության մասին խոսել այնպես, ասես այն ձեզ համար նպատակ և վերջնակետ լինի:

Դուք ազատ կլինեք, եթե ձեր օրերը լինեն առանց հոգսի, և ձեր գիշերները՝ առանց կարիքի ու վշտի,

Սակայն իսկապես ազատ կլինեք, եթե այդ ամենով լցված լինի ձեր կյանքը, իսկ դուք դրանցից վեր բարձրանաք՝ բոլորովին արձակ և մերկ:

Բայց ինչպես կարող եք բարձրանալ ձեր օրերից և գիշերներից անդին, մինչև չքանդեք շղթաները, որոնցով դուք ձեր գիտակցության արշալույսին կապել եք ձեր մայրամուտը:

Իրականում այն, ինչը դուք ազատություն եք անվանում, բոլոր շղթաներից ամենաամուրն է, չնայած, որ դրա կապերը փայլվում են արևի տակ, և այդ փայլը շլացնում է ձեզ:

Եվ ի՞նչն եք ձեզանից հեռացնելու, որպեսզի ազատ լինեք:

Եթե անարդար օրենքն է, որ ցանկանում եք

վերացնել, այդ օրենքը ձեր սեփական ձեռքով եք գրել ձեր ճակատին:

Եվ այն չեք կարող ջնջել՝ ձեր օրենքների գրքերն այրելով, կամ էլ ձեր դատավորների ճակատները լվանալով, նույնիսկ եթե ամբողջ ծովը նրանց վրա լցնեք:

Եվ եթե բոնակալին է, որ կցանկանայիք զահընկեց անել, առաջին հերթին ոչնչացրե՞ք ձեր մեջ կանգնեցրած նրա զահը,

Քանզի ի՞նչպես կարող է բոնակալը կառավարել ազատներին և հպարտներին, եթե նրանք իրենք իրենց ազատության հանդեպ չլինեն բրոնակալ և չամաշեն սեփական հպարտությունից:

Եվ եթե հոգսն է, որ կցանկանայիք դեն նետել, հիշե՞ք, որ այդ հոգսը դուք եք ընտրել, և ոչ թե ձեզ պարտադրվել է:

Եվ եթե վախն է, որ կըշեիք ձեզանից, իմացե՞ք, որ այդ վախսի բունը ոչ թե ձեր ձեռքերում, այլ ձեր սրտերում է:

Իրականում ձեր մեջ ամեն բան շարժվում է հավերժ կիսափարված՝ ցանկալին և սոսկալին, գարշելին և պաշտելին, այն, ինչին ձգտում եք, և այն, ինչից փախչում եք:

Դրանք՝ գրկախառնված, ինչպես լույս և ստրվեր, շարժվում են ձեր մեջ,

Եվ երբ ստվերն աղոտանում և անհայտանում է, լույսը, որ ուշացած է գալիս, մեկ այլ լույսի ստվեր է դառնում:

Եվ այդպես էլ ձեր ազատությունը, երբ կորցնում է իր կապանքները, վերածվում է մեկ այլ՝ ավելի մեծ ազատության կապանքի:

Բանականության և Կրքի մասին

Քրմուհին կրկին խոսեց և ասաց. «Խոսի՛ ք մեզ
հետ Բանականության և Կրքի մասին»:

Եվ նա պատասխանեց՝ ասելով.

- Ձեր հոգին հաճախ ռազմադաշտ է, որտեղ
բանականությունն ու դատողությունը պայքար
են մղում կրքի և ցանկության դեմ:

Երանի՛ ես խաղաղարար լինեի ձեր հոգում
և ձեր տարրերի տարածայնությունն ու հակա-
մարտությունը վերածեի միասնության և մեղե-
դու:

Բայց ես չեմ կարող դա անել, մինչև որ դուք
ինքներդ խաղաղարարներ չլինեք և չսիրեք ձեր
բոլոր տարրերը:

Չեր բանականությունն ու կիրքը ձեր ծովագը-նաց հոգու դեկն ու առազաստներն են:

Եթե դրանցից որևէ մեկը կոտրվի, ծովը կքշի ձեզ անհայտ ուղղությամբ, կամ Էլ կանգնած կը-մընաք ծովի մեջտեղում:

Քանզի միայնակ դեկավարող բանականությունն արգելող ուժ է, իսկ անուշադրության մատնված կիրքը՝ ինքն իրեն այրող կրակ:

Ուստի, թող ձեր հոգին ձեր բանականությունը բարձրացնի, հասցնի կրքին, որպեսզի ձեր բանականությունը կարողանա երգել,

Եվ թող ձեր հոգին բանականորեն ուղղություն տա ձեր կրքին, որպեսզի ձեր կիրքը կարողանա ամեն օր հարություն առնել և փյունիկի նման իր սեփական մոխիրներից վերածնվել:

*Բայց այս է 1915. աշուն
Հայոց Տիգրան*

Կուզեի, որ ընդունեիք ձեր դատողությունն ու ցանկությունը՝ որպես երկու սիրելի հյուրի:

Իհարկե, դուք մի հյուրին ավելի լավ չեք պատվի, քան մյուսին, քանզի նա, ով հոգատար է մի-այն մեկի նկատմամբ, կորցնում է երկուսի սերն ու վատահությունը:

Բլուրների վրա՝ սպիտակ բարդիների ստվերում նստած, հեռավոր դաշտերի ու մարզագետինների խաղաղությունն ու հանգստությունը վայելելիս, լուր ասե՞ք ձեր սրտում. «Աստված հանգստանում է խորհելով»:

Եվ երբ փոթորիկ լինի, ու հզոր քամին թափահարի անտառը, և որոտն ու կայծակը հայտարարեն երկնքի վեհության մասին, ասացե՞ք ակնածանքով. «Աստված շարժվում է կրքերով»:

Եվ քանի որ դուք Աստծո շունչն եք՝ մի տերև Նրա անտառում, դուք նույնպես հանգստացե՞ք խորհելով և գործե՞ք կրքերով:

Ցավի մասին

Եվ մի կին ասաց. «Խոսի՞ր մեզ հետ Ցավի մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Ձեր ցավը կոտրում է խեցին, որ պատյանն է ձեր ըմբռնումների:

Ինչպես որ պտղի կորիզը պետք է կոտրվի, որպեսզի կորիզի սիրտն արև տեսնի, այնպես էլ դուք պետք է ճանաչեք ցավը:

Եվ եթե դուք կարողանայիք միշտ հիանալ կյանքի ամենօրյա հրաշքներով, ձեր ցավը ձեզ ուրախությունից պակաս հրաշալի չեր թվա,

Եվ դուք կընդունեիք ձեր սրտի եղանակներն այնպես, ինչպես որ միշտ ընդունել եք տարվա եղանակները, որ անցնում են ձեր դաշտերի վրայով:

Եվ անվրդով կապրեիք վշտի ձմեռները:
Զեր ցավի մեծ մասն ինքներդ եք ընտրել:
Դա դառը դարմանն է, որով ձեր միջի բժիշկը
բուժում է ձեր հիվանդ եսին:

Ուստի, վստահե՛ք բժշկին և լուռ ու հնազանդ
խմե՛ք նրա դեղը,

Քանզի նրա ձեռքը, չնայած ծանր ու կոպիտ է,
առաջնորդվում է Անտեսանելիի նուրբ ձեռքով,

Եվ բաժակը, որ նա բերում է, չնայած այրում է
ձեր շուրթերը, պատրաստված է կավից, որ Բրու-
տը խոնավեցրել է սեփական սուրբ արցունքնե-
րով:

Ինքնաճանաչողության մասին

Եվ մի մարդ ասաց. «Խոսի՛ր մեզ հետ Ինքնաճանաչողության մասին»:

Ու նա պատասխանեց՝ ասելով.

- Ձեր սրտերը լուր պահում են օրերի և գիշերների գաղտնիքները:

Իսկ ձեր ականջները տենչում են լսել այն, ինչ ձեր սիրտը գիտի:

Դուք ցանկանում եք բառերի վերածել այն, ինչ միշտ իմացել եք ձեր մտքում,

Եվ մատներով դիավոլ ձեր երազների մերկ մարմսին:

Եվ թող այդպես լինի:

Զեր հոգու թաքուն աղբյուրը պիտի ժայթքի և կարկաչելով հոսի դեպի ծովը:

Եվ ձեր անհուն խորությունների գանձը պիտի տեսանելի դառնա,

Սակայն ոչ մի կշեռք չպիտի կշռի ձեր անհայտ գանձը,

Եվ չպիտի չափեք ձեր գիտելիքների խորությունը և ոչ մի գործիքով,

Քանզի մարդը ծով է՝ անսահման և անչափելի:

«Ես գտել եմ ճշմարտությունը» ասելու փոխարեն, ասե՞ք. «Ես մի ճշմարտություն եմ գտել»:

«Ես գտել եմ հոգու ճանապարհը» ասելու փոխարեն, ասե՞ք. «Ես տեսել եմ հոգին, որ քայլում էր դեպի ինձ»,

Քանզի հոգին բոլոր ճանապարհներով է քայլում:

Հոգին մի ուղիղ գծով չի քայլում և ոչ կեղեգի պես է աճում:

Հոգին, անհամար թերթիկներ ունեցող լոտոսի պես, մերկացնում է ինքն իրեն:

Ուսուցանելու մասին

Հետո ասաց մի ուսուցիչ. «Խոսի՞ր մեզ հետ Ուսուցանելու մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Ոչ ոք չի կարող ձեզ համար բացահայտել այլ քան, քան այն, ինչ արդեն կիսաքուն պառկած է ձեր գիտելիքի արշալույսին:

Ուսուցիչը, որ իր հետևորդների հետ ճեմում է տաճարի ստվերում, տալիս է նրանց ոչ թե իր իմաստությունը, այլ հավատն ու սերը:

Եթե նա խսկապես իմաստուն է, նա ձեզ չի հրավիրում մտնելու իր իմաստության տունը, այլ ձեզ ուղեկցում է դեպի ձեր սեփական մտքերի նախագավիթը:

Աստղագետը կարող է խոսել ձեզ հետ տիեզերքի իր ըմբռնման մասին, սակայն նա չի կա-

րող տալ ձեզ իր ըմբռնումը:

Երաժիշտը կարող է երգել ձեզ համար տիեզերքի ոիթմի մասին, սակայն նա չի կարող տալ ձեզ լսողությունը, որ ընկալում է այդ ոիթմը, ոչ ի ձայնը, որ այդ ոիթմս արձագանքում է:

Եվ նա, ով քաջածանոթ է թվերի գիտությանը, կարող է պատմել քաշի և շափի բնագավառի մասին, սակայն չի կարող առաջնորդել ձեզ այնտեղ,

Քանզի երևակայությունն իր թևերն այլ մարդու տալ չի կարող:

Եվ ինչպես ձեզանից յուրաքանչյուրդ մենակ եք Աստծո գիտակցության մեջ, այնպես էլ ձեզանից յուրաքանչյուրդ պետք է մենակ լինեք Աստղծոն և երկրի ձեք ըմբռնման մեջ:

Ընկերության մասին

Եվ մի երիտասարդ ասաց. «Խոսի՞ր մեզ հետ
Ընկերության մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Ձեր ընկերը ձեր կարիքների իրականացումն է:

Նա ձեր դաշտն է, որ ցանում եք սիրով և հընձում գոհունակությամբ:

Նա սնունդն է ձեր և օջախը,

Որի մոտ զալիս եք, երբ քաղցած եք և երբ հանգիստ եք փնտրում:

Երբ ձեր ընկերն իր մտքինն է ձեզ ասում, դուք չեք վախենում ձեր մտքի ոչ-ից և ոչ իլ այոն-ն եք թարցնում:

Եվ երբ նա լոռւմ է, ձեր սիրտը չի դադարում
լսել նրա սրտին,

Քանզի ընկերության մեջ բոլոր մտքերը, ցանկու-
թյուններն ու սպասումներն ընկերները միմյանց
հետ կիսում են ուրախությամբ, սակայն առանց այդ
մասին բղավելու:

Երբ բաժանվում եք ձեր ընկերոջից, դուք չեք
վշտանում,

Քանզի այն, ինչ ամենից շատ եք նրա մեջ սի-
րում, կարող է ավելի հստակ դառնալ նրա բա-
ցակայության ժամանակ, ինչպես որ լեռն ավե-
լի պարզ է երևում լեռնագնացին հարթավայրից:

Եվ ընկերության մեջ թող հոգին կոփելուց
բացի այլ նպատակ չլինի,

Քանզի սերը, որ սեփական առեղծվածի բա-
ցահայտումից բացի այլ բան է փնտրում, նման
է ծովը նետած ուռկանի, որ միայն ոչ պիտանին
է որսում:

Եվ թող ձեր լավագույնը ձեր ընկերոջ համար
լինի,

Քանզի եթե նա ծանոթ է ձեր տեղատվությա-
նը, թող ճանաչի նաև ձեր մակրնթացությունը:

Փնտրե՛ք ընկեր, ում հետ ոչ թե կսպանեք Ժա-

մանակը, այլ այդ ժամանակը կվայելեք,

Քանզի ընկերը ոչ թե ձեր դատարկությունը,
այլ ձեր կարիքները լցնելու համար է:

Եվ թող ընկերության հաճույքը միշտ լցված
լինի ծիծաղով և ուրախությամբ,

Քանզի փոքր բաների ցողի մեջ է սիրտն իր
լուսաբացը գտնում և թարմանում:

Խոսելու մասին

Հետո մի զիտուն ասաց. «Խոսի՛ք Խոսելու մասին»:

Եվ նա պատասխանեց՝ ասելով.

- Դուք խոսում եք այն ժամանակ, երբ դադարում եք հաշտ լինել ձեր մտքերի հետ,

Եվ երբ այլևս անկարող եք լինում ապրել ձեր սրտի միայնության մեջ, սկսում եք ապրել ձեր շուրջերի վրա, և ձայնը դառնում է ժամանց:

Եվ ձեր խոսքում մտքի մի մասը ոչնչանում է,

Քանզի միտքը տարածության թռչուն է, որը խոսքերի վանդակում կարող է բացել թևերը, սակայն չի կարող թռչել:

Զեզանից ոմանք փնտրում են զրուցասերների, քանզի վախենում են միայնակ լինելուց:

Միայնության լոռությունը նրանց համար բացահայտ է դարձնում իրենց մերկ էռությունները, ինչից որ նրանք խուսափում են:

Ոմանք էլ խոսում են ու առանց գիտակցության և կանխամտածումի հայտնում են ճշմարտություն, որն իրենք էլ չեն հասկանում:

Իսկ ոմանք էլ իրենց մեջ ճշմարտությունն են կրում, սակայն բառերով չեն արտահայտում:

Նրանց ներսում հոգին բարախուն լոռության մեջ է ապրում:

Երբ ճանապարհին, կամ շուկայում հանդիպեք ձեր ընկերոջը, թող ձեր հոգին շարժի ձեր շուրթերը և ուղղություն տա ձեր լեզվին:

Թող ձեր ձայնի ներքին ձայնը խոսի նրա ականջի ներքին ականջի հետ,

Քանզի նրա հոգին կհիշի ձեր սրտի ճշմարտությունը, ինչպես որ զինու համս է հիշվում,

Երբ մոռացվում է գույնը, և այլս չի լինում շիշը:

Ժամանակի մասին

Եվ մի աստղագետ ասաց. «Ուսուցի՛՛, իսկ
ի՞նչ կասես ժամանակի մասին»:

Եվ նա այսպես պատասխանեց.

- Դուք պիտի ուզենայիք չափել ժամանակը՝
անշափելին:

Պիտի հարմարեցնեիք ձեր վարքը և նույնիսկ
ձեր հոգու ընթացքը ժամերին ու եղանակներին:

Ժամանակը պիտի ձեզ համար առվակ դարձ-
նեիք, որի եզրին նստած կնայեիք, թե ինչպես է
այն հոսում:

Սակայն ձեր միջի տարաժամը տեղյակ է աշ-
խարիի անժամանակ լինելու մասին:

Եվ զիտի, որ երեկը ոչ այլ ինչ է, քան այսօրվա

հիշողությունը, իսկ վաղը՝ այսօրվա երազը:

Եվ գիտի, որ այն, ինչ երգում և խորհում է ձեր մեջ, դեռ բնակվում է սահմաններում այն առաջին պահի, որ տիեզերքում շաղ տվեց աստղերը:

Ձեզանից ո՞վ չի զգում, որ, թեև սերն անսահման է, սակայն պարփակված է իր գոյության կենտրոնում և չի տեղափոխվում սիրո մի մտածումից մյուսը, ոչ էլ սիրո մի արարքից մյուսը:

Եվ արդյոք ժամանակն էլ սիրո նման ամբողջական և անսահման չէ:

Բայց եթե ձեր մտքում ժամանակը պետք է չափեք տարվա եղանակներով, թող յուրաքանչյուր տարվա եղանակ իր մեջ ընդգրկի մսացած բոլոր եղանակները:

Եվ թող ներկան փարվի անցյալին հիշողությամբ և ապագային՝ ձգտումով:

Բարու և Չարի մասին

Եվ քաղաքի տարեցներից մեկն ասաց. «Խոսի՞ր մեզ հետ Բարու և Չարի մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Ես կարող եմ խոսել ձեր միջի բարու, բայց ոչ չարի մասին,

Քանզի ի՞նչ է չարը, եթե ոչ բարին՝ քաղցից և ծարավից տանջված:

Իսկապես, երբ բարին քաղցած է լինում, ուտելիք է փնտրում նույնիսկ մութ քարանձավսերում և, երբ ծարավ է լինում, խմում է նույնիսկ մեռյալ շրերից:

Բարի եք, երբ հաշտ եք ինքներդ ձեզ հետ:

Սակայն չար չեք, երբ ինքներդ ձեզ հետ հաշտ չեք,

Քանզի կիսված տունը գողերի որջ չէ, այլ կիսված տուն է:

Եվ առանց դեկի նավը կարող է աննպատակ թափառել վտանգավոր կղզիների միջև, սակայն չուզվել մինչև հատակ:

Բարի եք, երբ ձգտում եք տալ ինքներդ ձեզանից:

Սակայն չար չեք, երբ ձգտում եք ձեռք բերել ինքներդ ձեզ համար,

Քանզի, երբ ձգտում եք ձեռք բերել, արմատ եք, որ կպշում է հողին և սնվում է նրա կրծքից:

Իհարկե, պտուղը չի կարող արմատին ասել.
«Եղի՛ թ ինձ նման հասած և առատաձեռն»,

Քանզի պտղի համար տալը կարիք է, ինչպես որ ստանալը կարիք է արմատի համար:

Դուք բարի եք, երբ աշալուրջ եք խոսելիս,

Սակայն չար չեք, երբ քնած եք, մինչ ձեր լեզուն աննպատակ շարժվում է,

Քանզի նույնիսկ կմկմացող խոսքը կարող է ամրացնել տկար լեզուն:

Դուք բարի եք, երբ հաստատ ու համարձակ քայլերով գնում եք դեպի ձեր նպատակը,

Սակայն չար չեք, երբ գնում եք կաղալով:

Նույնիսկ նրանք, ովքեր կաղում են, չեն քայ-

լում հետրնթաց:

Բայց դուք, որ ուժեղ և արագաշարժ եք, տեսնեք, որ չկաղաք հաշմի մոտ՝ դա բարություն համարելով:

Դուք բարի եք անթիվ ձևերով, սակայն չար չեք, երբ բարի չեք,

Դուք միայն ծույլ և դանդաղաշարժ եք:

Ափսոս, որ եղքերուները չեն կարող արագություն սովորեցնել կրիաներին:

Չեր բարությունն է ընկած գերազույնին հասնելու ձեր ձգտման հիմքում, և այդ ձգտումը կա բոլորիդ մեջ:

Սակայն ձեզանից ոմանց մեջ այն հեղեղ է, որ թափով լցում է ծովը՝ տանելով իր հետ սարալանջերի գաղտնիքները և անտառի երգերը,

Իսկ մյուսների մեջ այն ծանծաղ վտակ է, որ անընդհատ գալարվում ու վարանում է, մինչև որ ափ է հասնում:

Բայց շատ ձգտողը քիչ ձգտողին թող չհարցնի. «Ինչո՞ւ ես դու դանդաղում և հապաղում»,

Քանզի իսկական բարին մերկին չի հարցնում. «Ո՞ւ իր է քո հագուստը», ոչ կլ անտունին. «Ի՞նչ է պատահել քո տանը»:

Աղոթքի մասին

Հետո մի քրմուհի ասաց. «Խոսի՛ր մեզ հետ
Աղոթքի մասին»:

Եվ նա այսպես պատասխանեց.

- Դուք աղոթում եք վշտի և կարիքի ժամա-
նակ, երանի՝ կարողանայիք աղոթել նաև ուրա-
խության և առատության ժամանակ:

Ի՞նչ է աղոթքը, եթե ոչ ինքներդ ձեզ երկնային
եթեր մղելը,

Եվ եթե ձեր հարմարավետության համար
է ձեր միջի վատը տարածության մեջ նետելը,
ապա նաև ձեր հաճույքի համար է ձեր սրտի լու-
սաբացն այնտեղ նետելը,

Եվ եթե միայն լաց լինել եք կարողանում, երբ

ձեր հոգին կանչում է ձեզ աղոթելու, նա պետք է նորից ու նորից կանչի ձեզ, մինչև որ զաք ծիծաղելով:

Երբ աղոթում եք, դուք վեր եք բարձրանում, որպեսզի օդում հանդիպեք նրանց, ովքեր այդ նույն պահին աղոթում են, և ում միայն այնտեղ կարող եք հանդիպել:

Ուստի ձեր այցն այդ անտեսանելի տաճար թող միայն հոգեզմայլության և քաղցր հաղորդության համար լինի,

Քանզի եթե դուք տաճար միայն խնդրելու համար մտնեք, չեք ստանա,

Եվ եթե այնտեղ մտնեք խոնարհվելու համար, չեք բարձրացվի,

Եվ եթե նույնիսկ այնտեղ մտնեք ուրիշների համար խնդրելու, ձեր ձայնը լսելի չի լինի,

Քավական է, որ տաճար անտեսանելի մըտնեք:

Ես չեմ կարող ձեզ սովորեցնել բառերով աղոթել:

Աստված ձեր բառերը չեմ, որ լսում եմ, այլ այն խոսքերը, որ ինքն է արտասանում ձեր շուրջերով:

Եվ ես չեմ կարող սովորեցնել ձեզ ծովերի, անտառների և լեռների աղոթքը:

Բայց դուք, որ ծնվել եք լեռներից, անտառներից և ծովերից, դուք կարող եք այդ աղոթքները ձեր սրտերում գտնել:

Եվ եթե դուք ունկնդիր լինեք զիշերվա լոռությանը, կլսեք, թե ինչպես են նրանք ասում. «Ո՛վ մեր Աստված, դու մեր թև առած էությունն ես, և քո կամքն է, որ մեր մեջ կամենում է,

Քո ցանկությունն է, որ մեր մեջ ցանկանում է,

Քո ձգոտումն է մեր մեջ, որ քեզ պատկանող մեր զիշերները վերածում է ցերեկների, որ նույնպես քեզ են պատկանում:

Մենք ոչինչ ել չենք կարող քեզ խնդրել, քանզի դու գիտես մեր կարիքները նախքան դրանք մեր մեջ ծնվում են,

Դու ես մեր կարիքը, որ, տալով քեզանից, տալիս ես մեզ ամեն ինչ»:

Հաճույքի մասին

Հետո մի ճգնավոր, որ տարին մեկ էր այցելում
այդ քաղաք, առաջ եկավ և ասաց. «Խոսի՞ր մեզ
հետ Հաճույքի մասին»:

Եվ նա ասաց.

- Հաճույքն ազատության երգ է,

Բայց ոչ ազատություն:

Այն ձեր ցանկությունների ծաղկունքն է,

Բայց ոչ պտուղը:

Այն անդունդ է, որ ձգտում է բարձունքի,

Բայց ո՛չ խորն է, ո՛չ էլ բարձր:

Այն թե առնող թռչուն է՝ վանդակի մեջ,

Բայց ոչ պարփակ տարածք:

Օ՛, իսկապես, հաճույքն ազատության երգ է,

Եվ ես կուզեի, որ դուք երգեիք այդ երգն ամ-

բողջ սրտով, սակայն չէի ուզի, որ այդ երգում
կորցնեիք ձեր սրտերը:

Ձեր երիտասարդներից ոմանք այնպես են հա-
ճույք փնտրում, ասես հաճույքն ամեն ինչ լինի, և
դրա համար նրանք դատապարտվում և կըշ-
տամբվում են:

Ես ո՞չ կդատապարտեի, ո՞չ ել կկշտամբեի
նրանց: Ես կթռղնեի, որ նրանք փնտրեն,

Քանզի նրանք կգտնեն հաճույք, բայց ոչ մի-
այն նրան,

Յոթն են հաճույքի քույրերը, և նրանցից ամե-
նափոքը հաճույքից ել գեղեցիկ է:

Չե՞ք լսել արդյոք այն մարդու մասին, որ փո-
րում էր հողը՝ արմատներ գտնելու համար, սա-
կայն գանձ գտավ:

Ձեր ծերերից ոմանք հաճույքները հիշում են
զջումով, ինչպես որ հարբած ժամանակ գոր-
ծած սխալներն են հիշում,

Սակայն զջումը մտքի մթագնումն է և ոչ
ապաշխարանքը:

Նրանք իրենց հաճույքները պետք է երախ-
տագիտությամբ հիշեն, ինչպես որ կհիշեին
ամառվա բերքահավաքը:

Սակայն եթե զջումը նրանց մխիթարում է,
թող մխիթարվեն:

Եվ ձեր մեջ կան այնպիսիք, որ ո՛չ երիտասարդ են, որ փնտրեն, ո՛չ էլ ծեր են, որ հիշեն,

Եվ փնտրելու ու հիշելու վախից խուսափում են բոլոր հաճույքներից, որպեսզի հանկարծ չարհամարհեն և չվիրավորեն հոգուն:

Սա էլ հենց նրանք հաճույքն է:

Եվ այսպիսով նրանք նույնպես գտնում են զանձ, չնայած որ արմատներ գնտելու համար փորում են դողդողացող ձեռքերով:

Բայց ասացե՞ք ինձ՝ ո՞վ կարող է վիրավորել հոգուն:

Կարո՞ղ է արդյոք սոխակը վիրավորել գիշեր-վա լոությանը, կամ լուսատտիկը՝ աստղերին:

Կամ կարո՞ղ է արդյոք ձեր բոցը, կամ ծուխը ծանրաբեռնել քամին:

Կարծում եք, թե հոգին հանդարտ մի լճակ է, որը կարող եք ալեկոծել գավազանո՞վ:

Հաճախ, ինքներդ ձեզ հաճույքից զրկելով, ձեր գոյության խորքերում եք պահում ցանկությունը:

Իսկ ո՞վ չգիտի, որ այն ինչ անտեսվել է այսօր, սպասում է վաղվան:

Նույնիսկ ձեր մարմինը գիտի իր ժառանգականությունն ու իր արդարացի կարիքը, և հնարավոր չէ նրան մոլորեցնել:

Ձեր մարմինը ձեր հոգու տավիղն է,

Եվ ձեզանից է կախված դրանից քաղցր մեռեղի, կամ ձայների խառնաշփոթ ստանալը:

Եվ այժմ դուք հարցնում եք ձեր սրտում.
«Իսկ ինչպէ՞ս պետք է տարբերենք հաճույքի լավը վատից»:

Գնացե՞ք ձեր դաշտերն ու այգիները և կիմանաք, որ մեղվի հաճույքն է ծաղկից մեղր հավաքելը,

Բայց նաև ծաղկի հաճույքն է իր հյութը մեղվին տալը,

Քանզի մեղվի համար ծաղիկը կյանքի աղբյուր է,

Իսկ ծաղկի համար մեղուն կյանքի սուրհանդակ է,

Եվ երկուսի՝ մեղվի և ծաղիկի համար, տալու և ստանալու հաճույքը կարիք և հոգեզմայլանք է:

Օրֆալեզի՝ ժողովուրդ, ձեր հաճույքներում ծաղիկների և մեղուների նման եղեք:

Գեղեցիկի մասին

Եվ մի պոետ ասաց. «Խոսի՛ք մեզ հետ Գեղեցիկի մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Որտե՞ղ պետք է փնտրեք գեղեցիկը և ինչպե՞ս կարող եք գտնել նրան, մինչև որ նա ինքը ձեր ճանապարհն ու առաջնորդը չդառնա:

Եվ ի՞նչպես պետք է նրանից խոսեք, մինչև որ նրանով ձեր խոսքը չհյուսվի:

Վշտացածներն ու վիրավորներն ասում են. «Գեղեցիկը բարի և քնքուշ է,

Նա քայլում է մեր մեջ երիտասարդ մոր նման՝ սեփական փառքից փոքր-ինչ ամոթխած»:

Եվ կրքոտներն ասում են. «Ո՛չ, գեղեցիկը

հզոր և սարսափելի է,

Փոթորկի նման նա ցնցում է երկիրը՝ մեր ոտքերի տակ և երկինքը՝ մեր գլխավերևում»:

Հոգնածներն ու ձանձրացածներն ասում են. «Գեղեցիկը մեղմ շշնջոց է: Նա շշնջում է մեր հոգում:

Նրա ձայնը տեղի է տալիս մեր լոռությանը՝ ինչպես մոտի աղոտ մի լույս, որ դողում է ստվերի վախից»:

Իսկ անդադրուժներն ասում են. «Մենք լսել ենք, թե ինչպես է նա բղավում լեռներում,

Եվ նրա բղավոցի հետ գալիս էին սմբակների, թե ինչպես թափահարումի և առյուծների մոնչոցի ձայներ»:

Գիշերը քաղաքի պահակներն ասում են. «Գեղեցիկը լուսաբացի հետ կելնի արևելքից»:

Կեսօրին աշխատավորներն ու ճամփորդներն ասում են. «Մենք տեսել ենք, թե ինչպես է մայրամուտի պատշգամբից նա խոնարհվում երկրի վրա»:

Զմուանը ձյունով պատվածներն ասում են. «Նա կզա զարնան հետ՝ սփռվելով բլուրների վրա»:

Եվ ամուան շոգին հնձվորներն ասում են.

«Մենք տեսել ենք նրան աշնանային տերենների հետ պարելիս և նրա մազերի վրա ձյան փաթիլ ենք նկատել»:

Այս բոլորը դուք ասել եք գեղեցիկի մասին,

Սակայն իրականում դուք ոչ թե նրա, այլ ձեր շքավարարված կարիքների մասին եք խոսել,

Մինչդեռ գեղեցիկը ոչ թե կարիք, այլ հոգեզրմայլանք է:

Այն ծարավ բերան չէ, ոչ ել ձեռք է առաջ պարզած,

Այլ բոցավառ սիրտ և հմայված հոգի է:

Այն ո՛չ պատկեր է, որ կարող եք տեսնել, ո՛չ ել երգ է, որ կարող եք լսել,

Այն պատկեր է, որ տեսնում եք փակ աշքերով, և երգ է, որ լսում եք փակ ականջներով,

Այն բուսահյութ չէ՝ պալարապատ կեղևի տակ, ոչ ել թև՝ կցված ճիրաններին,

Այն մշտադալար այզի է և հրեշտակների երամ, որ մշտապես թոշքի մեջ է:

Օրֆալեզի՝ ժողովուրդ, գեղեցիկը կյանք է, երբ կյանքը աստվածային իր դեմքի վրայից հանում է քողը:

Բայց դուք եք և կ' կյանքը, և՝ քողը:

Գեղեցիկն իրեն հայելու մեջ նայող հավիտենություն է,

Բայց դուք եք և հավիտենությունը, և՝ հայելին:

Կրոնի մասին

Եվ մի ծեր քահանա ասաց. «Խոսի՛ր մեզ հետ
Կրոնի մասին»:

Եվ նա պատասխանեց.

- Մի՞թե այսօր այլ բանի մասին խոսել եմ:

Արդյոք կրոն չե՞ն բոլոր գործերն ու խորհըր-
դածությունները,

Եվ այն, ինչը ո՞չ գործ է, ո՞չ միտք, այլ հրաշք և
անակնկալ է, որ ծագում է հոգում նույնիսկ այն
ժամանակ, երբ ձեռքերը քար են տաշում, կամ
թել են մանում:

Ո՞վ կարող է տարանջատել իր հավատքն իր
գործերից, կամ իր հավատն իր զբաղմունքնե-
րից:

Ո՞վ կարող է շաղ տալ իր ժամերն իր դիմաց և
ասել. «Սա Աստծո, իսկ սա ինձ համար է, սա իմ

հոգու, իսկ սա իմ մարմսի համար է»:

Չեր բոլոր ժամերը ճախրում են տարածության մեջ՝ ձեր մի եսից մյուսը:

Նա, ով իր բարոյականությունը կրում է՝ որպես լավագույն հազուստ, լավ է մերկ լինի,

Քամին և արևը չեն փասի նրա մաշկը:

Եվ նա, ով սահմանում է իր վարքը՝ ըստ բարոյախոսության, իր երգող թռչունին բանտարկում է վանդակի մեջ:

Ամենաազատ երգերը վանդակի ձաղերի հետևից չեն, որ հնչում են:

Եվ նա, ում համար երկրպագելը պատուհան է, որ կարելի է բացել, սակայն նաև փակել, դեռ չի այցելել իր հոգու տունը, որի պատուհանները բաց են լուսաբացից լուսաբաց:

Չեր հանապազօրյա կյանքը ձեր տաճարն ու ձեր կրոնն է:

Ամեն անզամ այնտեղ մտնելիս, վերցրե՛ք ձեզ հետ այն ամենը, ինչ ունեք:

Վերցրե՛ք զութանը, և՛ դարբնոցը, և՛ թակը, և՛ վինը,

Այն ամենը, որ պատրաստել եք անհրաժեշտության, կամ հաճույքի համար,

Քանզի մտածմունքների մեջ չեք կարող ձեր ձեռքբերումներից վեր բարձրանալ, ոչ եւ ձեր

անհաջողություներից ցած իշխել:

Եվ վերցրե՛ք ձեզ հետ բոլոր մարդկանց,

Քանզի երկրպագելիս չեք կարող նրանց հույ-
սերից բարձր թռչել, ոչ էլ նրանց հուսահատու-
թյուններից ցած ընկնել:

Եվ եթե ցանկանում եք ճանաչել Աստծոն,
պետք չէ, որ առեղծվածներ լուծող լինեք:

Նայե՛ք ձեր շուրջը և կտեսնեք, որ Նա խա-
ղում է ձեր երեխաների հետ:

Նայե՛ք երկնքին ու կտեսնեք, որ Նա քայլում
է ամպերի մեջ՝ ձեռքերը մեկնած կայծակին, և
կտեսնեք, որ իշնում է ցած՝ որպես անձրեն:

Դուք կտեսնեք, որ Նա ժպտում է՝ որպես ծա-
ղիկ, հետո ձեռքով է անում՝ որպես մի ծառ:

Մահվան մասին

Հետո Ալմիտրան խոսեց՝ ասելով. «Իսկ այժմ
մենք ուզում ենք հարցնել Մահվան մասին»:

Եվ նա ասաց.

- Դուք ուզում եք իմանալ մահվան գաղտնի-
քը,

Բայց դուք չեք կարող այն գտնել, մինչև ոք
չփնտրեք կյանքի սրտում:

Բուն, ոք կույր է ցերեկը, չի կարող բացահայ-
տել լույսի գաղտնիքը:

Եթե իսկապես ուզում եք տեսնել մահվան հո-
գին, լայն բաց արեք ձեր սիրտը կյանքի մարմսի
առջև,

Քանզի կյանքն ու մահը մեկ են, ինչպես ոք
մեկ են զետն ու ծովը:

Ձեր հույսերի և ցանկությունների խորքում

ընկած են լուռ գիտելիքներն անդինի մասին,

Եվ ձյան տակ երազող սերմերի նման ձեր
սիրտը երազում է գարնան մասին:

Վստահե՞ք երազանքներին, քանզի երազանք-
ների մեջ է թաքնված դարպասը՝ դեպի հավեր-
ժություն:

Դուք վախենում եք մահից այնպես, ինչպես
հովիփս է դողում, երբ կանգնած է թագավորի
առջև, որը, որպես պատիվ, պատրաստվում է
իր ձեռքը դնել նրա գլխին:

Արդյոք դողացող հովիփս ուրախ չէ՝, որ պետք
է արժանանա թագավորի ուշադրությանը:

Սակայն մի թե նա ավելի մտահոգված չէ, որ
դողում է այդպես:

Քանզի ի՞նչ է մեռնելը, եթե ոչ՝ մերկ կանգնել
քամուն և հալվել արևի մեջ:

Եվ ի՞նչ է դադարել շնչելը, եթե ոչ՝ ազատել
շունչն անվերջ ելնեցներից, որպեսզի այն կարո-
ղանա բարձրանալ, տարածվել և անխոչընդոտ
ձգվել դեպի Աստված:

Այն ժամանակ միայն կկարողանաք իսկա-

պես երգել, երբ իսմեք լոռության գետից:

Այն ժամանակ կսկսեք բարձրանալ, երբ հասնեք լեռան գագաթին:

Եվ այն ժամանակ իսկապես կպարեք, երբ հողը դիպչի ձեր մերկ ոտքերին:

Հրաժեշտ

Արդեն երեկո էր:

Ալմիտրան՝ գուշակուհին, ասաց. «Օրինյա՛լ լինի այս օրը, և՝ այս տեղը, և՝ քո հոգին, որ խոսեց»:

Եվ նա պատասխանեց. «Ե՞ս էի արդյոք խոսողը, մի՞թե ես նույնազես ունկնդիր չեի»:

Այնուհետև նա իջավ Տաճարի աստիճաններից, և բոլորը գնացին նրա հետևից: Նա հասավ իր նավին և կանգնեց տախտակամածի վրա:

Եվ, կրկին շրջվելով դեպի մարդիկ, բարձրացնելով ձայնը, նա ասաց.

- Օրֆալեզի՛ ժողովուրդ, քամին ինձ կանչում

Է ձանապարի ընկնելու:

Ես ավելի քիչ եմ շտապում, քան քամին, սակայն, միևնույն է, պետք է զնամ:

Մենք՝ թափառականներս, որ միայնության ուղին ենք որոնում, նոր օր չենք սկսում այնտեղ, որտեղ նախորդ օրն ենք ավարտել, և լուսաբացին արևը մեզ չի գտնում այնտեղ, որտեղ հրաժեշտ է տվել մայրամուտին:

Նոյնիսկ այն ժամանակ, երբ երկիրը ննջում է, մենք ձամփորդում ենք:

Մենք կենսունակ բույսի սերմեր ենք, և երբ լինվին հասուն ենք, տրվում ենք քամուն և ցրիվ լինում աշխարհով մեկ:

Կարծ եղան օրերն իմ ձեզ հետ, և ավելի կարծ՝ բառերը, որ խոսեցի:

Սակայն իմ ձայնը պետք է մարի ձեր ականջներում, և իմ սերը՝ կորչի ձեր հիշողություններից, ու այդ ժամ ես կրկին կզամ,

Եվ ավելի հարուստ սրտով ու հոգուն ավելի հնազանդ շուրթերով կխոսեմ ձեզ հետ:

Այո՛, ես կվերադառնամ մակրնթացության հետ,

Ու թեև մահը կարող է ինձ թաքցնել, և լուրջունն ինձ իր մեջ առնել, միևնույն է կրկին կը-ձըգտեմ հասնել ձեր ըմբռնմանը:

Եվ ձգտումս ապարդյուն չի լինի:

Եթե ասածներից որևէ քան ճիշտ է, այդ ՃՐ-ՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ կբացահայտվի ավելի հստակ ձայնով և՝ ձեր մտքերին ավելի հարազատ բառերով:

Ես գնում եմ քամու հետ, Օրֆալեզի՝ ժողովուրդ, քայց ոչ դեպի ունայնություն,

Եվ եթե այս օրը ձեր կարիքների և իմ սիրո իրազործման օրը չէր, ուրեմն թող այն այլ օրվա խոստում լինի:

Մարդու կարիքները փոխվում են, սակայն չի փոխվում սերը, ոչ էլ ցանկությունը, որ սերը բավարարի իր կարիքները:

Ուստի զիտեմ, որ կվերադառնամ խորը լուրջունից ես:

Մշուշը, որ ցրվում է լուսաբացին՝ թողնելով դաշտերում ոչ այլ ինչ, քան ցողն իր, կբարձրանա ու կվերածվի ամպի ու անձրև դարձած կիշնի կրկին:

Եվ ես ել մշուշի նման եմ եղել.

Գիշերվա լուրջյան մեջ ես քայլել եմ ձեր փողոցներում, և իմ հոգին մտել է ձեր տները,

Եվ ձեր սրտերը բաբախել են իմ սրտում, և ձեր շունչն իմ դեմքին է եղել, և ես ճանաչել եմ ձեզ բոլորիդ:

Ես իմացել եմ ձեր ուրախությունն ու ցավը, և ձեր երազները եղել են իմ երազները:

Եվ հաճախ ձեր մեջ ես եղել եմ՝ ինչպես լիճը
լեռների մեջ.

Իմ մեջ արտացոլվել են ձեր բարձունքներն ու
ձեր լանջերը և ձեր մտքերն ու երազանքները:

Ինչպես վտակներ՝ իմ լոռությանն է խառնվել
ձեր մանուկների ծիծաղը, և՝ ձեր երիտասարդ-
ների իղձերը՝ ինչպես գետեր:

Եվ երբ հասել են իմ հատակին, վտակներն ու
գետերը չեն դադարել երգելը:

Սակայն ծիծաղից ավելի քաղցր և իղձերից
ավելի հզոր քան կար,

Դա ձեր միջի անսահմանն էր.

Անսահման մարդը, որի մեջ դուք բոլորդ ոչ
այլ ինչ, քան բշիջներ և մկաններ եք,

Նա, ում երգն իր մեջ ընդգրկում է ձեր բոլորի
անձայն երգերը:

Անսահման մարդու մեջ է, որ դուք անսա-
ման եք,

Եվ նրան նայելիս եք, որ տեսա և սիրեցի ձեզ:

Եվ ի՞նչ տարածություններ կարող է հաղթա-
հարել սերը, որոնք պարփակված չեն այդ ան-
սահմանության մեջ:

Ի՞նչ տեսիլքներ, ի՞նչ սպասումներ և ի՞նչ հա-
վակնություններ կարող են այդ թոփչքից վեր
սլանալ:

Խնձորենու ծաղիկներով ծածկված հսկա կաղնու ծառի է նման ձեր միջի անսահման մարդը:

Նրա ուժը պահում է ձեզ հողի վրա, նրա բույրը բարձրացնում է ձեզ օդ, և նրա տոկունության մեջ դուք անմահ եք:

Ձեզ ասվել է, թե շղթայի պես, դուք ել ձեր ամենաթույլ օղակի նման թույլ եք:

Սակայն սա կես ճշմարտություն է, քանզի դուք նաև ուժեղ եք՝ ձեր ամենաուժեղ օղակի պես:

Ձեր ամենափոքր արարքով ձեզ գնահատելը նույնն է, ինչ չափել օվկիանոսի հզորությունը փրփուրի փխրունությամբ:

Ձեր անհաջողություններով ձեզ դատելը նույնն է, ինչ տարվա եղանակներին մեղադրել փոփոխականության համար:

Այո՛, դուք օվկիանոսի նման եք,

Ու թեև ձեր ափերին խարխսված նավերը մակրնթացության են սպասում, օվկիանոսի նման դուք ել չեք կարող արագացնել ձեր մակրնթացությունը:

Նաև տարվա եղանակների նման եք,

Ու թեև ձեր ձմռան մեջ դուք մերժում եք ձեր գարունը,

Սակայն ձեր մեջ հանգչող գարունը քննկոտ ժպտում ու չի նեղանում:

Մի՛ կարծեք, որ ես ասում եմ այս բաները, որպեսզի դուք կարողանաք մեկդ մյուսին ասել. «Նա մեզ գովերգեց: Նա մեր մեջ միայն լավը տեսավ»:

Ես ընդամենը խոսում եմ ձեզ հետ բառերով այն, ինչ ձեր մտքում ինքներդ գիտեք:

Եվ ի՞նչ է բառերով արտահայտված գիտելիքը, եթե ոչ անբառ գիտելիքի ստվերը:

Ձեր մտքերն ու իմ բառերը կնքված հիշողության ալիքներ են, որ արձանագրում են մեր երեկը,

Եվ նաև՝ հինավորց օրերը, երբ երկիրը ո՞չ մեզ գիտեր, ո՞չ էլ ինքն իրեն,

Եվ գիշերները, երբ երկիրը քառսի մեջ էր:

Իմաստուն մարդիկ եկել են ձեզ մոտ՝ իրենց իմաստությունից ձեզ տալու: Ես եկա՝ ձեր իմաստությունից վերցնելու:

Եվ գտա այն, ինչ իմաստությունից հզոր է.

Դա ձեր միջի հրավառ հոգին է, որ ինքն իրենից վեր է բարձրանում,

Մինչ դուք՝ նրա բոնկումից անտեղյակ, ձեր օրերի մահն եք ողբում:

Նա է միայն վախենում շիրիմից, ով կյանք է փնտրում մարմսի մեջ:

Այստեղ շիրիմսեր չկան:

Այս լեռներն ու բույսերը օրբան և հանգրվանաքարեր են:

Ամեն անզամ, երբ անցնում եք դաշտով, որտեղ պառկած են ձեր նախնիները, ուշադի՛ր նայեք և կտեսնեք ինքներդ ձեզ և ձեր երեխաներին՝ ձեռք ձեռքի տված պարելիս:

Ճշմարիտ է, որ դուք հաճախ ուրախանում եք առանց հասկանալու:

Ուրիշներն ել են եկել ձեզ մոտ, որ ձեզ ոսկե ապագա են խոստացել, իսկ դուք նրանց հարըստություն և փառք եք տվել:

Ես ձեզ ոչինչ չեմ խոստացել, սակայն դուք իմ հանդեպ ավելի մեծահոգի եք եղել:

Դուք տվել եք ինձ կյանքի նկատմամբ ծարավը:

Չկա մարդու համար ավելի մեծ պարզե, քան այն, ինչը նրա բոլոր նպատակները վերածում է այրվող շուրթերի, իսկ ողջ կյանքը՝ աղբյուրի:

Այն է իմ պատիմս ու իմ պարզելը,

Որ ամեն անզամ աղբյուրից ջուր խմելիս,

տեսնում եմ, որ ջուրը կենդանի է և ինքն էլ ծարավ է,

Եվ այդ ջուրը խմում է ինձ, մինչ ես խմում եմ այդ ջուրը:

Զեզանից ոմանք համարել են, որ ես չափից շատ հպարտ և ամաչկոտ եմ՝ պարզեներ ընդունելու համար:

Եվ ես իսկապես բավական հպարտ եմ՝ վարձատրություն, սակայն ոչ պարզեներ ստանալու համար:

Եվ, չնայած ես հատապտուղներ եմ կերել լեռներում, երբ դուք կցանկանայիք հրավիրել ինձ ձեր սեղանի շուրջ,

Եվ քնել եմ տաճարի սյունասրահում, երբ դուք հաճույքով ինձ ապաստան կտայիք,

Սակայն արդյոք իմ օրերի և զիշերների մասին ձեր սիրով լի մտահոգությունը չէ՞ր, որ քաղցր էր դարձնում իմ ուտելիքը և զարդարում էր իմ քունը տեսիլքներով:

Ամենից շատ ես օրինում եմ ձեզ այն բանի համար,

Որ դուք տալիս եք շատ, մինչդեռ կարծում եք, թե չեք տալիս ընդհանրապես:

Քանզի բարությունը, որ հիանում է ինքն իրենով, վերածվում է քարի,

Եվ լավ արարքը, որ ինքն իրեն փաղաքշական խոսքեր է ասում, դառնում է անեծք:

Իսկ ձեզանից ոմանք ինձ մարդախույս և սեփական միայնությամբ գինովցած անվանեցին:

Եվ ասացին. «Նա խորհրդակցում է անտառի ծառերի, բայց ոչ մարդկանց հետ:

Նա միայնակ նստում է բլուրների վրա և վերևից է նայում մեր քաղաքին»:

Ճշմարիտ է, որ ես բլուրներն եմ բարձրացել և քայլել եմ հեռավոր վայրերում,

Քանզի միայն բարձրից ու հեռվից կարող է ի խսկապես ձեզ տեսնել:

Եվ մոտիկ լինել հնարավոր է՝ միայն հեռու լինելով:

Իսկ մյուսներն ինձ անվանելու բառեր չգտան, և ասացին. «Օտարակա՞ն, անհաս բարձունքների՝ սիրահար, ինչո՞ւ ես դու ապրում բարձունքներում, որտեղ արծիվսերն են բույն շինում:

Ինչո՞ւ ես ձգուում անհասանելիին:

Ի՞նչ փոթորիկներ ես արդյոք դու որսում,

Եվ ի՞նչ անիրական թռչուններ ես բռնում երկընքում:

Ե՛կ և եղի՛ր մեզանից մեկը:

Իշխ՛ր և հազեցրո՛ւ քաղցու մեր հացով, իսկ
ծարավդ՝ մեր զինով»:

Իրենց հոգու մենության մեջ ասացին նրանք
այս ամենը,

Սակայն եթե նրանց մենությունն ավելի խո-
րը լիներ, նրանք կիմանային, որ ես փնտրում էի
ձեր ուրախության և ցավի գաղտնիքը:

Եվ որսում էի միայն ձեր ավելի մեծ էություն-
ները, որ երկնքում են քայլում:

Սակայն որսորդը նաև որսն էր,

Քանզի շատ նետեր թռան աղեղից՝ իմ իսկ
կրծքին հասնելու համար:

Եվ թռնողը նաև սողունն էր,

Քանզի երբ թևերս փոեցի արևին, երկրի վրա
նրանց ստվերը կրիա էր:

Եվ ես՝ հավատացողս, նաև կասկածողն էի,

Քանզի հաճախ մատս դրեցի ինքս իմ վերքին,
որպեսզի ավելի խորը լինի հավատս ձեր նկատ-
մամբ և ավելի լավ ճանաչեմ ձեզ:

Եվ այդ հավատով ու ճանաշողությամբ ա-
սում եմ,

Որ դուք փակված չեք ձեր մարմիներում, ոչ էլ

կապված եք ձեր տներին ու դաշտերին:

Ձեր եսն ապրում է լեռներից վերև և թափառում է քամու հետ:

Այն տաքանալու համար չի սողում դեպի արևը, ոչ էլ ապահով լինելու համար փոսեր է փորում մթության մեջ:

Այն ազատ հոգի է, որ պարուրում է երկիրը և ճախրում է եթերում:

Եթե բառերս պարզ չլինեն ձեզ համար, մի՛ փորձեք պարզել դրանք,

Քանզի անպարզն ու անորոշը ամեն ինչի սկիզբն են, սակայն ոչ երբեք՝ վերջը:

Ես կուզեի, որ դուք ինձ որպես սկիզբ հիշեիք:

Կյանքն ու այն ամենը, ինչ ապրում է, առաջացել է մշուշում և ոչ բյուրեղյա պարզության մեջ:

Իսկ ո՞վ գիտի, գուցե բյուրեղյա պարզությունը հենց ցրված մշուշն է:

Կուզեի ինձ հիշելիս հետևյալը հիշեիք.

Այն, ինչ ձեր մեջ ամենատկարն ու շփոթվածն է թվում, հենց դա էլ ամենաուժեղն ու վճռականըն է:

Արդյոք ձեր շունչը չէ՞ , որ կառուցել և պնդաց-

թել է ձեր ոսկորների կառուցվածքը:

Եվ արդյոք ձեր բոլորի կողմից մոռացված երազանքը չէ՝, որ կառուցել է ձեր քաղաքը և կերտել այն ամենն, ինչ կա այդտեղ:

Եթե կարողանայիք տեսնել տատանումներն այդ շնչի, կդադարեիք այլս այլ բան տեսնել:

Եվ եթե կարողանայիք երազանքի շշունջը լսել, այլ ձայն չիք լսի:

Սակայն դուք ո՞չ տեսնում, ո՞չ ել լսում եք, և լավ է, որ այդպես է.

Քողը, որ ծածկում է ձեր աչքերը, կբարձրացվի այն ձեռքերով, որ գործել են այդ քողը:

Եվ կավը, որով լցված են ձեր ականջները, կմաքրվի այն մատներով, որոնցով հունցվել է:

Եվ դուք կտեսնեք,

Ու դուք կլսեք,

Սակայն դուք չեք ցավի, որ կույր և խուլ եք եղել,

Քանզի այդ օրը դուք կիմանաք թաքնված նպատակներն ամեն ինչի,

Եվ կօրինեք մթությունն այնպես, ինչպես որ կօրինեիք լույսը:

Այս ամենն ասելուց հետո նա նայեց շուրջը և տեսավ իր նավապետին, որ դեկի մոտ կանգնած, հայացքն ուղղել էր դեպի պատրաստ առագաստները և՝ դեպի հեռուն:

Եվ նա ասաց.

- Համբերատար, շատ համբերատար է իմ նավապետը:

Քամին փշում է, և առագաստներն անհանդարտ են,

Նույնիսկ դեկն է ուղղություն խնդրում,

Սակայն իմ նավապետը լռությանս է հանգիստ սպասում:

Եվ նավաստիները, որ լսել են մեծ ծովի երգերը, համբերատար լսեցին ինձ:

Եվ նրանք այլս չպետք է սպասեն:

Ես պատրաստ եմ,

Վտակը հասել է ծովին, և մեկ անգամ ևս հզոր մայրը գրկում ու կրծքին է սեղմում իր որդուն:

Յտեսությո՞ւն, Օրֆալեզի՛ ժողովուրդ:

Այս օրն ավարտվեց:

Այն փակվում է մեր առջև, ինչպես ջրաշուշանն է փակվում իր վաղվա առջև:

Մենք կպահենք այն, ինչ տրվել է մեզ այստեղ,

Եվ եթե այն բավարար չլինի, կրկին կզանք և միասին դեպի պարզեցողը կպարզենք մեր ձեռքերը:

Հիշե՞ք, որ վերադառնալու եմ ձեզ մոտ:

Մի քիչ էլ կանցնի, և իղձս փոշի ու փրփուր
կհավաքի այլ մարմսի համար:

Մի քիչ էլ կանցի՝ քամու դադարի մի պահ, և
մեկ այլ կին ինձ կծնի:

Ցտեսություն ձեզ և իմ երիտասարդությանը,
որ անց եմ կացրել ձեզ հետ:

Երեկ էր, որ հանդիպեցինք մենք երազում:

Իմ մենության մեջ դուք երգեցիք ինձ համար,
իսկ ես ձեր ձգտությունը աշտարակ կառուցեցի
երկնքում,

Սակայն այժմ մեր քունն ավարտված է, մեր
երազը վերջացած է, և արդեն արշալուս չէ:

Մեր վերևում մայրամուտ է, մի ամբողջ օր էլ
անցավ, և մենք պետք է բաժանվենք:

Եթե հիշողության մթնշաղին մեկ անգամ էլ
հանդիպենք, մենք կրկին կխոսենք, և դուք ինձ
համար կերգեք ավելի խորիմաստ երգեր:

Եվ եթե մեր ձեռքերը մեկ այլ երազում հան-
դիպեն, մենք կրկին աշտարակ կկառուցենք եր-
կընքում:

Այս ասելով՝ նա նշան արեց ծովագնացներին,
և նրանք անմիջապես վեր հանեցին խարիսխը:
Ազատ էր նավը, և նրանք շարժվեցին դեպի

արևելք:

Եվ ճիշ լսվեց մարդկանցից, ասես մեկ սրտից լիներ այդ ճիշը, և այն բարձրացավ վեր՝ դեպի մթնշաղ, ու տարածվեց ծովի վրա, ասես շեփորի կանչ լիներ:

Միայն Ալմիտրան էր լուռ նայում նավի հետևից, մինչև որ այն անհայտացավ մշուշում:

Եվ երբ բոլորն արդեն ցրվել էին, նա դեռ կանգնած էր ծովի մոտ և հիշում էր նրա բառերը.

«Մի քիչ էլ կանցի՝ քամու դադարի մի պահ, և մեկ այլ կին ինձ կծնի»:

թագավորութեա 5 1915.info
բայցո